ԱՅԼԱԽՈՍ ԵՎ ԱՅԼԱԴԱՎԱՆ ՀԱՅԵՐ

9(47.925)
Ա-60

«ՀԱՅՐԵՆԻՔ» մատենաշար, թիվ 8

3984

ԱՅԼԱԽՈՍ ԵՎ ԱՅԼԱԴԱՎԱՆ ՀԱՅԵՐ

Հրատարակիչ՝ *«ՀԱՅՐԵՆԻՔ» Ակումբ*

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 32.001:31:93/99
ԳՄԴ 66 + 60.5 + 63.3 (0)
Ա - 600

Խմբագիր՝ Ավագ Հարությունյան

Ա - 600 Այլախոս և այլադավան հայեր: Խմբագիր՝ Ավագ Հարությունյան: Երևան, «Հայրենիք» Ակումբ, 2007, 47 էջ:

Այս հոդվածները ժամանակին հրատարակվել են «Հանրապետական» ամսագրում: Ժողովածուն արծարծվող թեմայի վերաբերյալ առաջին գրքույկն է: Ակնհայտ է, որ խնդրի ուսումնասիրությունը ռազմավարական, ուսուցողական և դաստիարակչական նշանակություն ունի, որը հարկ է դիտարկել Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների համալիրում:

Հայության այլախոս կամ այլադավան բեկորների Հայրենիքին կապելն ու հայրենատիրության նվիրական գործում ներգրավելը կարևորագույն խնդիր է, որի իրականացումը կկասեցնի նրանց ծուլումը և կնպաստի հայկական ազգային կենսակերպի արմատավորմանը:

Այսինքն, հայը կարող է այլախոս կամ այլադավան լինել, բայց երբեք չդավաճանել իր Ցեղի ոգուն:

ISBN 99930-4-498-9

ԳՄԴ 66 + 60.5 + 63.3 (0)

© «Հայրենիք» Ակումբ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց ճակատագիրը տարաբնույթ հանգամանքների բերումով մեր ազգակիցներին տարածել է ի սփյուռս ողջ աշխարհի: Ավելին, այդ ուղղությամբ ողբերգական դերակատարություն է ունեցել թուրքական պետության կողմից իրականացված Հայոց Մեծ Եղեռնը, որի արդյունքում հայության գերակշիռ մասը ֆիզիկապես ոչնչացվեց իր բնական Հայրենիք-Հայկական լեռնաշխարհի խոշորագույն արևմտյան հատվածում:

Թվում էր, թե հերթական անգամ պիղծ թշնամին կարողացավ «լուծել» Հայ տեսակի լինելիության խնդիրը: Սակայն, ո՛չ և երիցս ո՛չ: Մինչդեռ, մենք ապավինելով մեր Ցեղի անսպառ ոգեղեն ներուժին՝ ի զորու եղանք ոչ միայն ամոքել ստացած վերքերը, այլև Սարդարապատում և Արցախում հաղթանակել և պատուհասել նույն ոճրագործ թուրքին:

Անշուշտ, չափազանց դժվարին գործ է սփյուռքում հայ մնալը, հաճախ դրա համար հիրավի հերոսական ճիգեր են պահանջվում: Նամանավանդ, եթե նկատի ունենանք այն վճռորոշ հանգամանքը, որ հայությունը Հայրենիքից դուրս ապրել և ապրում է էթնիկ, կրոնական, քաղաքական և լեզվա-մշակութային միանգամայն տարբեր և ինչու չէ՝ նաև հակադիր համակարգերում:

Այսինքն, նման ապազգայնացնող մթնոլորտը գլխավորապես առաջին հերթին հարվածում է սփյուռքահայի ազգային ինքնագիտակցությանը, քանզի մայրենիի փոխարեն խոսելով օտար լեզվով, բռնի կերպով կրոնափոխվելով և գրեթե զրկվելով իր տեսակին բնորոշ հատկանիշներից՝ նրա միակ անփոխարինելի հաղթաթուղթը և ապավենը օտար շրջապատում շարունակում է մնալ հենց ազգային ինքնագիտակցությունը, որի զորակցությունն է միմիայն նրան հայ պահում:

Նշվածի ցայտուն վկայություն պետք է համարել Արևմտյան Հայաստանում և այլուր «ծպտյալ», այլադավան կամ այլախոս հայերի կենսագոյությունը, պայքարը և ազգային զարթոնքը:

Ժողովածուի հոդվածները տպագրվել են «Հանրապետական» հանդեսում, ինչն անշուշտ նորանկախ Հանրապետությունում թեմայի նկատմամբ հետաքրքրության և ուշադրության առաջին դրսևորումն է: Իսկ որ այս թեմայի ուսումնասիրությունն իսկապես ռազմավարական նշանակություն ունի՝ որևէ կասկածից դուրս է և ակնհայտ:

Այն միաժամանակ ուսուցողական և դաստիարակչական կարևոր նշանակություն ունի, և պետք է դիտարկել նաև Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունների համատեքստում:

Այժմ կարևորագույն խնդիր է հայության այդ բեկորներին ըստ ամենայնի Հայրենիքին կապելը և սատարելը ու հայրենատիրության նվիրական գործում ներգրավելը:

Այդ ամենի իրականացումը կկասեցնի նրանց ծուլումը և կնպաստի հայկական ազգային կենսակերպի արմատավորմանը:

Այսինքն, հայը կարող է այլախոս կամ այլադավան լինել, բայց երբեք չդավաճանել իր Ցեղի Ոգուն:

«Հայրենիք» Ակումբ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԵՎ ԱՅԼԱԴԱՎԱՆ ՈՐՈՇ ԽՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ

Սփյուռքային գոյակերպը հայ ժողովրդի պատմական զարգացումների ուղեկիցն է եղել դեռևս վաղ ժամանակներից: Պատմական, քաղաքական, մշակութային հանգամանքների թելադրանքով տարբեր ժամանակներում մայր էթնոսից անջատվել են զանազան խմբեր, որոնք հարյուրամյակներ շարունակ բնակվելով օտար էթնոմշակութային և սոցիալ-քաղաքական միջավայրում՝ կրել են ինքնության դրսևորման փոփոխություններ կամ էլ ձեռք բերել առանձնահատուկ գծեր՝ իրենց անվան վրա կրելով, սակայն, «հայ» բաղադրամասը:

Հայության այս բեկորների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լրացնելու մեր ժողովրդի պատմության էթնիկ խճանկարը, մյուս կողմից էլ՝ անդրադառնալու մենթալային խնդիրների, քանի որ ժամանակակից հայկական մենթալիտետում դժկամությամբ են ընկալվում այլալեզու և այլադավան խմբերը (օրինակ՝ հայ-մահմեդականների պարագան):

Միևնույն ժամանակ, այս խմբերի ուսումնասիրության միջոցով հնարավոր է դառնում անդրադառնալ էթնոպահպան մեխանիզմներին, էթնիկ զարգացումներին խոչընդոտող գործոններին:

Թեև մեզանում այլալեզու ու այլադավան բազում խմբեր կան, սակայն ստորև ներակայացնում ենք թաթախոս հայերին, համշենահայերին, ծաթ-հայերին:

Թաթախոս հայեր

Դեռ վաղ միջնադարում թե՛ Բյուզանդիան, թե՛ Իրանը օգտագործել են հայ զինվորականությանը իրենց ռազմական ձեռնարկներում, սահմանների պաշտպանության մեջ:

Միջին դարերում և՛ Այսրկովկասի, և՛ Իրանի անվտանգությունն ապահովելու առումով ռազմավարական կարևոր նշանակություն ուներ «Ճորա պահակը» կամ «Դերբենտի անցքը»: 5-6-րդ դարերում այսրկովկասյան երկրներն իր քաղաքական ենթակայության ներքո գցելուն զուգընթաց Սասանյան Իրանը լուրջ միջոցառումներ ձեռնարկեց «Ճորա պահակը» ամրացնելու և Այսրկովկասի հյուսիս-արևելյան շրջաններում հաստատուն ներկայություն ապահովելու նպատակով: Կառուցվեցին Դերբենտի պաշտպանական համակարգերը, և այդ տարածքներում վերաբնակեցվեցին Իրանից տեղափոխված բնակիչներ, որոնց համար առանձնահատուկ սոցիալ-քաղաքական արտոնություններ ու կարգավիճակ սահմանվեցին: Արաբական աղբյուրները սասանյան Կուբադ I և Խոսրով Անուշիրվան թագավորների այս ձեռնարկների կապակցությամբ բավական հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում, ըստ որոնց պարսից արքաները Այսրկովկասի հյուսիս-արևելքում բնա-

կեցնում են նաև «սիսականներին», այսինքն՝ Սյունիքից տեղափոխված զինվորական բնակչությանը:

Առհասարակ, դեռևս հայոց թագավորության գոյության ժամանակաշրջանում Սյունյաց նախարարական տան վրա էր դրված «Ճորա պահակի» պաշտպանությունը, իսկ 5-րդ դարում, երբ Հայաստանի զգալի հատվածը ենթակա էր Իրանին և ուներ մարզպանության կարգավիճակ, «Ճորա պահակը» շարունակում էր հայոց նախարարների համար զինվորական ծառայության վայր մնալ:

5-րդ դարում Իրանի կողմից հայկական զինվորական բնակչության բնակեցումը Այսրկովկասի հյուսիս-արևելքում, Դերբենտի շրջանում միանգամայն համապատասխանում էր այդ ժամանակաշրջանում առկա պատմաքաղաքական ավանդույթին: Այնուամենայնիվ, հայկական այդ խումբը իրանական վերաբնակիչների համեմատ փոքր էր, թեև ուներ նրանց հավասար սոցիալական բարձր կարգավիճակ և գործառույթ: Առհասարակ, Իրանի քաղաքական, մշակութային գերակայությունը Արևելյան Այսրկովկասում պահպանվեց մինչև 15-16-րդ դարերը: Հայկական խմբի սոցիալական բարձր կարգավիճակը և գործառույթը քաղաքական իշխանությամբ օժտված իրանական շերտի հետ ակտիվ փոխհարաբերությունների հիմք էր, ինչն էլ իր հերթին հանգեցրեց լեզվական ձուլման գործընթացի: Իրանալեզու դառնալով՝ հայկական խումբը պահպանեց սոցիալական բարձր կարգավիճակը, իսկ քրիստոնեության պահպանման միջոցով՝ այն զուգակցվեց հայկական խմբային պատկանելության հետ: Պատմական, ազգաբանական, լեզվական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայկական այս խմբի լեզվական ձուլման գործընթացները տեղի են ունեցել 6-11-րդ դարերում:

Հետագա դարերում, երբ սկսվեցին տարածաշրջանի թրքացման գործընթացները, խմբի համար հայադավանության էթնոպահպան գործառույթին ավելացավ նաև իրանալեզվությունը՝ որպես հակազդեցություն այդ գործընթացների:

Թրքալեզու ցեղերի ներխուժումներին զուգընթաց, որպես երկրագործ նստակյաց բնակչությանը քոչվորների կողմից տրվող նվաստացուցիչ անվանում, սկսեց տարածվել «թաթ» անունը: Այն աստիճանաբար Արևելյան Այսրկովկասի իրանական բնակչության համար ձեռք բերեց էթնոնիմի իմաստ, թեև դա տարածվեց իրանական ոչ բոլոր խմբերի վրա: Այդ արեալում բնակվող իրանալեզու դարձած հայկական խմբերը, նույնիսկ ռեգիոնում տեղի ունեցող թրքացման ու մահմեդականացման գործընթացների պարագայում, պահպանեցին հայկական ինքնագիտակցությունն ու հայադավանությունը: Ավելին, պահպանեցին նաև լեզվի «փարս» կամ «ֆարս» անունը, որը հետո՝ 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին, գիտության մեջ սկսեց կոչվել «հայ-թաթերեն» բարբառ: Ի դեպ, այդ բարբառում իրանական շերտն ավելի լավ է պահպանվել, քան թաթ-մահմեդականների ու հրեա-թաթերի լեզվում, որոնք մեծ չափով ենթարկվել են սեմա-թյուրքական ազդեցության:

18-րդ դարում թաթախոս հայերը բնակվում էին Ղուբայի, Դերբենտի, Շամախու մոտ մեկ տասնյակից ավելի գյուղերում:

18-20-րդ դարերում թաթախոս հայերի տարաբաշխվածության խնդիրը առավելապես զուգորդվում է տեղահանությունների ու տեղափոխությունների հետ: Մեծ ազդեցություն ու հետևանք ունեցավ հատկապես 1796թ. Վ. Զուբովի գլխավորած արշավանքը: Ռուսական զորքի հետ միասին Դերբենտի, Մուշկուրի, Ղուբայի տարածքներից թաթախոս հայերը հարկադրված հեռանում են հիմնականում Հյուսիսային Կովկաս, հաստատվում Ղզլարում, Մոզդոկում, Սուրբ Խաչում (ներկայումս՝ Բուդյոնովսկ), Կասան-Յամում (հետագայում՝ Եդեսիա), Ղզլարի մոտ հիմնադրում Դերբենտ և իրենց նախկին գյուղերի անունը կրող Մոլլա-խալիլ, Ղարաջալու բնակավայրերը:

Պատմական զարգացումների ընթացքում տեղի է ունեցել նաև թաթախոս հայերի մահմեդականացում: Մահմեդականացված հատվածի մոտ դեռևս 20-րդ դարում պահպանվում էին հիշողություններ իրենց «հայկական անցյալի» մասին:

Չնայած լեզվական ձուլմանը, իրանալեզու դառնալուն, ակտիվ այլէթնիկ ու այլադավան միջավայրին հայկական այս խումբը պահպանեց էթնիկ ինքնագիտակցությունը: Էթնոպահպան կարևոր դեր է ունեցել դավանական գործոնը՝ զուգակցված հոգևոր և նյութական մշակույթի տարրերով՝ տոներ, հավատալիքներ, ծիսական ուտեստ:

Տարաբնույթ պատմական իրադարձությունների հետևանքով 19-րդ դարում Այսրկովկասում թաթախոս հայեր բնակվում էին Մադրասա, Քիլվար, Խաչմաս գյուղերում: 20-րդ դարի սկզբի հակահայկական հալածանքները տարածվեցին նաև դրանց բնակիչների վրա: Խաչմասը գոյատևեց մինչև 1918թ., իսկ Մադրասան և Քիլվարը շարունակեցին իրենց գոյությունը նաև խորհրդային տարիներին՝ Ադրբեջանի կազմում: 1988-89թթ. հակահայկական հալածանքների արդյունքում Ադրբեջանի թաթախոս հայերի վերջին բեկորները հարկադրված եղան լքել իրենց բազմադարյան բնակավայրերը: Քիլվարցիներն ու մադրասեցիների զգալի մասը այժմ բնակվում են Հյուսիսային Կովկասում: Հայաստանում մադրասեցիները հավաքական ապրում են Արագածոտնի մարզում իրենց հիմնած Դպրեվան (Նոր Մադրասա) գյուղում:

Համշենահայեր

8-րդ դարում արաբական լծի տակ գտնվող հայ ժողովրդի վիճակը բավական ծանր էր: Ստեղծված իրավիճակից դուրս գալու, բռնություններից խուսափելու նպատակով Համամ և Շապուհ Ամատունի իշխանների գլխավորությամբ Արագածոտնի, Կոտայքի, Վասպուրականի Արտազ գավառից շուրջ 12 հազար բնակչություն դուրս է գալիս ու հաստատվում Բյուզանդական կայսրության Խալդեա կամ Խաղտիք

գավառում՝ պատմական Պոնտոսում: Ղևոնդ պատմիչը վկայում է, որ Կոստանդին կայսրը «տայր պատիւ նախարարացն և նորին հեծելոցն», իսկ հասարակ ժողովրդին բնակեցրեց արգավանդ մի երկրում: Այնուամենայնիվ, համարվում է, որ հայ իշխանները մինչ այդ էլ որոշակի կապեր ունեցել են այդ տարածքների ու այնտեղ իշխողների հետ:

Աղբյուրների վկայությամբ Համամ Ամատունի իշխանը Տամբուր քաղաքի տեղում մի նոր ավան է հիմնում՝ իր անունով այն Համամաշեն կոչելով: Համարվում է, որ դրանից էլ առաջացել են Համշեն, Հեմշին անվանումները:

Պատմաքաղաքական, ժողովրդագրական այս իրողությունների հետևանքով էլ ձևավորվեց Համշենի հայկական իշխանությունը: Այն մի քանի դար շարունակ գոյատևելով՝ 15-րդ դարում մտցվեց Օսմանյան կայսրության մեջ: Համշենի վերջին հայ իշխան Դավիթը հարկադրված ապաստանում է Սպեր գավառում, այնուամենայնիվ ենթադրվում է, որ նույնիսկ դրանից հետո էլ անմատչելի լեռնագավառների հայ «ձորապետները» իրենց ինքնավար կարգավիճակը պահպանեցին:

16-18-դ դարերում քրիստոնյա հպատակներին բռնի մահմեդականացնելու ու թրքացնելու օսմանյան քաղաքականությունը տարածվեց նաև համշենահայերի վրա: Մոտ երկու դար տևած գործընթացների հետևանքով 19-րդ դարում համշենահայերի մի զգալի հատված արդեն իսկ մահմեդականացված էր, թեև աղբյուրների վկայությամբ՝ իրենց կենցաղով նրանք տարբերվում էին շրջակա մահմեդական ժողովուրդներից, հայախոս էին, խոսում էին ինքնատիպ համշենահայ բարբառով, պահպանել էին քրիստոնեական բազում սովորույթներ: Այդ իսկ պատճառով այդ ժամանակի մամուլում, գրականության մեջ նրանց մասին սկսեցին կիրառվել «կես-կես», «հայ-մահմեդական» տերմինները:

Համշենից ու հարակից տարածքներից պատմական տարբեր ժամանակաշրջաններում զանազան հանգամանքների թելադրանքով տեղի են ունեցել համշենահայերի գաղթեր: Օրինակ, 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով զգալի թվով քրիստոնյա համշենահայեր հաստատվեցին Աբխազիայում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում:

1921թ. ռուս-թուրքական պայմանագրի հետևանքով ներկա Աջարիայի տարածքում հայտնվեցին մահմեդական համշենահայերի կամ «հեմշինների», «հեմշիլների» 6 գյուղեր, որոնց բնակիչները 1926թ. մարդահամարի տվյալներով՝ հայախոս էին, իրենց մայրենի լեզուն համարում էին հայերենը: 1944թ. այս գյուղերի բնակիչները աքսորվեցին Միջին Ասիա՝ Ղազախստան ու Կիրգիզիա: Նրանց մի մասը հետագայում, ինչպես նաև 1988-1989թթ. տեղափոխվեց ու հաստատվեց Կրասնոդարի երկրամասում:

Ըստ համշենահայերի խնդիրներով զբաղվող որոշ ուսումնասիրողների՝ Միջին Ասիա աքսորված մահմեդական համշենահայերին միայն Ստալինի մահից հետո իրավունք տրվեց անձնագիր ունենալ, բայց

դրանցում «հայի» փոխարեն գրվում է «խեմշիլ», երբեմն էլ՝ «թուրք», այն պատճառաբանությամբ, որ հայերը քրիստոնյա են, իսկ նրանք՝ մահմեդական:

Հետաքրքրական է, որ ներկայումս Հյուսիսային Կովկասում հաստատված «հեմշիլները» անմիջական հարաբերություններ են հաստատում իրենց հարևան և միևնույն բարբառով խոսող քրիստոնյա համշենահայերի հետ: Ըստ տեղեկությունների՝ Կրասնոդարում ներկայումս «հեմշիլների» մոտ հայացման միտումներ են նկատվում:

Ավելացնենք, որ մի քանի հազար «հեմշիլներ» բնակվում են նաև Թուրքիայում:

Ծաթ - հայեր

Այս խումբը հայության առեղծվածային և մինչ այժմ չուսումնասիրված բեկորներից է: Դեռևս միջնադարյան մատենագրության մեջ այս անունով հայտնի խմբի բնութագրական հատկանիշը հունադավանությունն էր կամ քաղկեդոնիկությունը: Քաղկեդոնիկությունը սկիզբ է առնում 5-րդ դարից: Ինչպես հայտնի է, Հայ Եկեղեցին չմասնակցեց Քաղկեդոնի եկեղեցական ժողովին և չընդունեց նրա որոշումները:

Քաղաքական, մշակութային զանազան փոխհարաբերությունների, տարաբնույթ այլ գործոնների հետևանքով դեռևս միջին դարերում կային հունադավան հայկական խմբեր: Ն. Մառի կարծիքով դրանք հիմնականում գտնվում էին Հայաստանի հարավային և կենտրոնական շրջաններում ու կարևոր դեր են ունեցել միջնադարյան հայ իրականության մեջ: Հետագա զարգացումների ընթացքում Հայ Եկեղեցու ամրապնդմանը զուգընթաց նրանք ապազգայնացման փուլեր են ապրում՝ ձուլվելով վրացական, հունական և սիրիական հոսանքների մեջ:

Ըստ Մխիթարյանների «ծաթ-ծայթը» նշանակում է «անլիարժեք», «կիսատ», այսինքն՝ «ոչ հույն, ոչ հայ» կամ «կես հայ, կես հույն»:

15-րդ դարում Մխիթար Ապարանցին գրում է, որ ծաթ-հայերը լեզվով, գրով և ծագմամբ հայ են, սակայն հույն՝ դավանանքով:

Հետաքրքրական է, որ դեռևս 19-րդ դարում Ակնում բնակվող հունադավան հայերի ժամասացության լեզուն հայերենն էր: Ըստ տեղեկությունների՝ հունադավան հայեր մինչև վերջին ժամանակներս բնակվում էին Վրաստանի Ծալկայի շրջանի Կերյակ գյուղում, իսկ մինչ 20-րդ դարի սկիզբը՝ նաև Մեսխեթ-Ջավախքում:

Առհասարակ, խմբի մշակութային դիմագծի, ինքնության, պատմական զարգացումների խնդիրները մինչև այժմ ուսումնասիրված չեն:

Արսեն Հակոբյան

«Հանրապետական», թիվ 7, 2004թ.

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՅԼԱԴԱՎԱՆ ԵՎ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԽՄԲԵՐԸ ՍԻՐԻԱ - ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Տարբեր ժամանակներում եղել են ու այսօր էլ կան բնօրրանից դուրս ապրող հայկական հավաքականություններ, որոնք այս կամ այն չափով պահպանել են իրենց ազգային ինքնագիտակցությունը: Նրանցից են Սիրիայում և Լիբանանում ապրող այլադավան և այլալեզու հայկական խմբերը:

Հայկական մայր զանգվածից դավանանքային օտարումը լայն դուռ է բացում լեզվական և առհասարակ ազգային օտարման առջև: Բայց Սիրիա-Լիբանանում նկատելի է մյուս երևույթը. լեզվական օտարումն է առավել արագացնում դավանանքային-ազգային օտարումը:

Հստակեցնենք. այլադավան ասելով հասկանում ենք այն հավաքականությունները, որոնք չեն պատկանում սփյուռքի հայկական երեք հիմնական եկեղեցիներին՝ Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական:

* * *

Օսմանյան կայսրությունն իր ոչ մուսուլման քաղաքացիների հետ հարաբերությունները կարգավորում էր «միլլեթ»-ների համակարգի շնորհիվ: 1830թ.-ից պետությունը ճանաչեց հայկական երկու միլլեթ՝ Հայ Առաքելական և Հայ Կաթոլիկ եկեղեցիները, հանձինս նրանց Կ. Պոլսի պատրիարքարանների: Ավետարանականները անկախ իրենց ազգությունից կազմում էին առանձին միլլեթ: Օսմանյան կայսրության փլուզումից հետո «միլլեթ»-ների համակարգը համարյա նույնությամբ ժառանգեցին նրա փլատակների վրա կազմավորված Սիրիան և Լիբանանը, ուր քաղաքացիական բնույթի որոշ հարաբերությունների գրանցումն ու կարգավորումը (ծնունդ, ամուսնություն, ամուսնալուծություն, մահ, ժառանգական որոշ հարցեր) պետությունը զիջել է «միլլեթ»-ներին (արաբերենում՝ «թաիֆա», այսինքն՝ համայնք): Դա ավելի շեշտված է հատկապես Լիբանանում, որի պետական կառուցվածքն ինքնին դավանանքային է (պետական ազդեցիկ պաշտոնները, խորհրդարանի ու կառավարության աթոռները բաժանված են համայնքների միջև): Սույն փաստը շատ կարևոր է՝ ըմբռնելու համար հետագա շարադրանքը, քանի որ այս պետությունների քաղաքացիները տարաբնույթ հարցեր լուծելիս անպայման պետք է անցնեն իրենց պատկանած կրոնական համայնքի խողովակով: Այս իրավիճակը մի կողմից՝ օժանդակում է այդ համայնքների ղեկավար ինստիտուտների դիրքերի պահպանմանը, մյուս կողմից՝ պատկանելիության որոշակի գիտակցություն է առաջացնում կամ պահպանում համայնքի անդամների մեջ:

Լիբանան

Պատմական որոշ աղբյուրներ վկայում են, որ 12-րդ դարի սկզբին խաչակիրները Լիբանանի լեռներում հանդիպել են հայկական բազմաթիվ բնակավայրերի: Ենթադրվում է, որ նրանց հայազգի բնակիչները հետագա դարերում ամբողջովին ծուլվել են մարոնիտ եկեղեցու հետևորդներին, և նրանց հետ էլ 15-17-րդ դարերում ասորախոսությունից անցել արաբախոսության: Այս հայկական զանգվածը հիմնովին ծուլված է: Հայկական թույլ ինքնագիտակցություն այսօր պահպանվել է այն գաղթականների սերունդների մոտ, որոնք ընդունած լինելով կաթոլիկությունը և հալածվելով Հայ Առաքելական եկեղեցուց, 18-րդ դարի առաջին կեսին հաստատվել են Լեռնալիբանանի որոշ շրջաններում ու ժամանակի ընթացքում ծուլվել մարոնիտներին: Նրանց սերունդների մոտ կա թույլ հիշողություն իրենց հայկական ծագման մասին: Ոմանք պահպանել են հայահունչ ազգանուններ, հայերեն ձեռագիր կամ տպագիր մատյաններ, հայկական ուրիշ մասունքներ: Բայց 18-րդ դարի այս գաղթականների, ինչպես նաև հաջորդ 150-200 տարիներին Լիբանան գաղթած հայազգի կաթոլիկների մի զգալի զանգվածը պահպանել է կապը Հայ կաթոլիկ եկեղեցու հետ, բայց հայոց լեզվից օտարվելով՝ ազգային ինքնագիտակցության էական նահանջ է արձանագրել: Այսօր արաբախոս հայ կաթոլիկներն իրենք իրենց ավելի շուտ լիբանանցի են զգում, քան հայ: Այս զանգվածի համար հայ կաթոլիկ գլխավոր եկեղեցիներում ծիսակատարությունները կատարվում են երկու լեզուներով՝ հայերեն և արաբերեն:

Լիբանանի այլադավան հայոց մի փոքր խումբ էլ լատին եկեղեցու հետևորդ է: Սրանք սերունդներն են մասնավորաբար Կիլիկիայում 19-րդ դարում լատին միսիոներների որսացած հայազգիների: Լիբանանահայ լատինների քանակը ենթադրաբար չի անցնում հարյուր հոգուց: Նրանք բաժանվում են երկու մասի՝ հայախոսներ և արաբախոսներ: Առաջին ենթախմբի մոտ գերակշռում է հայկական ինքնագիտակցությունը, երկրորդի մոտ՝ արաբականը: Վերջինիս և արաբախոս հայ կաթոլիկների շրջանում նպատակային գործունեություն ծավալելու պարագայում կարելի է զգալիորեն բարձրացնել նրանց հայկական ինքնագիտակցության աստիճանը:

Կապված արտահոսքի հետևանքով թվաքանակի փոքրացման հետ՝ Լիբանանում նախապես հայահոծ որոշ բնակավայրերի (Սայդա և Զահլե քաղաքներ ու վերջինիս շրջակայքը) հայերի սերունդները վերջին տասնամյակներին արագ լեզվափոխվում են՝ ուղեկցված ազգային ինքնագիտակցության զգալի նահանջով: Նրանց և առհասարակ արաբախոս ենթախմբերի մոտ շատ բարձր է խառնամուսնությունների տոկոսը (Լիբանանում, ըստ Հայ առաքելական առաջնորդարանի տվյալների, այդ համայնքում այս դարասկզբին արձանագրվել է 33% խառնամուսնություն. արաբախոսների մոտ այս տոկոսն անհամեմատ մեծ

է), որը ևս նպաստում է այս հայազգի զանգվածների արագ ուծացմանն ու վերջնական ձուլմանը:

Լիբանանում իսլամությունն ընդունած հայերը աննշան քանակ են կազմում: Լիբանանյան մամուլում երբեմն պատահում են հայությունը հուշող ազգանուններով մուսուլմանների անուններ (օրինակ՝ ալ-Արմանի, Արմենազի...): Նրանք հիմնականում իսլամի սուննի և շիա համայնքների անդամներ են: Դուրզիական համայնքի Մահեր տոհմն իրեն հայկական ծագում է վերագրում: Իսլամությունն ընդունած բոլոր հայազգիների մոտ հայկական ինքնագիտակցությունը գրեթե զրոյական մակարդակ ունի:

Վերջին տարիներին պատահում են փաստեր, երբ անձնական ինչ-ինչ հաշիվներից մղված (քաղաքացիության ստացում, ամուսնալուծություն, բազմակնություն...) հայազգիները կամովին դավանափոխվում են: Նրանք մեծ մասամբ մտնում են քրիստոնեական մեծ համայնքներից մեկնումեկի (մարոնիտներ, հույն ուղղափառներ, հույն կաթոլիկներ), հազվադեպ՝ իսլամի սուննի կամ շիա համայնքների մեջ:

Սիրիա

Սիրիայում այլադավան և այլալեզու հայկական հավաքականությունները այսօր հիմնականում համախմբված են աշխարհագրական հինգ շրջաններում.

1. Միջերկրական ծովի առափնյա շրջան (հիմնականում՝ Լաթաքիա, մասամբ՝ Թարթուս և Բանիաս քաղաքներ), բացառությամբ հայախոս ու հայադավան Քեսապի ենթաշրջանի:

2. Որոնդես գետի, ավելի շուտ՝ նրա ոռոգած Ռուճի հովտի շրջան (ծովափի ու Համա–Հալեպ առանցքի միջև):

3. Հալեպ քաղաքը:

4. Սիրիական անապատն ու նրա քաղաքները (Ռակկա, Դեր Զոր):

5. Հյուսիս-արևելքի շրջանը (Հասաքե և Կամիշլի քաղաքներ, Մալիքիյե, Թել Աբիադ, Թել Քոչաք, Դերիկ, Ամուդա ավաններ ու շրջակայք):

Ա. Ծովափի շրջան: Հաշվում է 1000-1200 հոգի: Գաղթօջախը կազմվել է հիմնական երեք հոսքերի հետևանքով. մինչև Մեծ Եղեռնը այնտեղ բնակվածների սերունդներ, Մեծ Եղեռնի ու Կիլիկիայի պարպումի հետևանքով հաստատվածներ, Քեսապից տեղափոխվածներ:

Ամենից խոցելին առաջին ենթախումբն է, որ հիմնականում արաբախոս է՝ չնչին բացառություններով: Թեև այս ենթախմբի անդամների մի մասը Հայ առաքելական համայնքի անդամ է, այսուհանդերձ նրանց մոտ ազգային հանրույթի (տվյալ պարագայում՝ հայության) պատկանելիությունը փոխարինված է ազգայնականության արևմտյան տեսաբան Անդերսոնի «երևակայական համայնքով» (տվյալ պարագայում՝ քրիստոնեական համայնքով): Այս ենթախմբի անդամները վատ են

ընդունում միայն այն դեպքերը, երբ իրենց պատկանած «քրիստոնեական համայնքի» որևէ անդամ ամուսնանում է մուսուլմանի հետ: Նույն երևույթները նկատվում են նաև Մեծ Եղեռնից հետո հաստատվածների սերունդների, նվազ չափով՝ Քեսապից տեղափոխվածների մոտ:

Բ. Ռուճի հովտի շրջան: Ներկայանում է Արամո, Ղնեմիե, Յակուբիե, Կնիե գյուղերով ու հովտի մյուս բնակավայրերում ապրող հայազգիներով: Առաջին երկու բնակավայրերից շատերը հայրենադարձվեցին Խորհրդային Հայաստան՝ 1946-47թթ., իսկ մնացողները բարբառը փոխարինեցին արաբերենով: Յակուբիեն ու Կնիեն ևս արաբախոս են, առաջինը պատկանում է Հայ Առաքելական Եկեղեցուն, երկրորդը՝ լատին համայնքին:

Այդտեղի հայության այլադավան և այլալեզու չորս խմբերի էթնոլեզվա-դավանական վիճակը մանրամասն վերլուծել է Հակոբ Չոլաքյանն «Անտիոքի մերձակա Ռուճի հովիտի հայերը» պատմագիտության թեկնածուի ատենախոսության մեջ (ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2002): Շահեկանության համար արտատպում ենք ատենախոսության «Վերջաբանի» հետևյալ հատվածը. «1946թ. Սուրիո ամբողջական անկախացումեն ետք, երբ արաբական ազգայնականությունը դարձավ պետական գաղափարախոսություն և սկսան վերացվիլ գաղութարար իշխանությանց հետքերը, լատինացած հայերը հայտնվեցան անտեր մնացածի վիճակի մեջ: Քանի որ Սուրիո մեջ անոնք չէին կրնար «ֆրանսանալ», անոնք նախընտրեցին գաղթել օտար երկրներ կամ ալ ավելի արաբանալ (քանի որ վերջինս էր այս պարագային առավելություններ տվող ազդակը)՝ մնալով հանդերձ լատինադավան, քան վերադառնալ իրենց մայր եկեղեցվո և հայ ազգին գիրկը:

Հայկական տեղեկատվական ընդհանուր դաշտին մեջ, ինչպես նախորդ տասնամյակներուն, այսօր ևս գրեթե ամբողջովին բացակա է Որոնդես գետի ջուրերու ոռոգած Ռուճի հովիտի հայկական կղզեխումբը: Այս շրջանը, հայ ազգագրության տեսակետեն, այսօր կներկայացնե խայտաբղետ պատկեր մը, որը կարելի է ամփոփել հետևյալ խումբերուն մեջ.

1. Արաբացած-իսլամացած հսկա զանգված մը՝ ամբողջովին կորսնցուցած իր հայկական ծագման ինքնագիտակցությունը: (Այսօր այս խումբը հաշվում է 500-700 հազար հոգի - Գ. Յ.):

2. Արաբացած (արաբախոս), բայց Հույն ուղղափառ կամ Հույն կաթողիկե (Մելքիթ) եկեղեցվո դավանանքն ընդունած հայեր (Ընկըզիկ գյուղը, մասամբև՝ Ջըդեյդե գյուղը, քիչ թվով անհատներ Ջըսըր Շուղուր քաղաքին և Որոնդեսի հովիտի զանազան գյուղերուն մեջ), որոնց մոտ շատ հեռավոր նշույլներ կան իրենց հայկական ծագման մասին:

3. Արաբախոս, սակայն լատին եկեղեցվո դավանանքն ընդունած հայ հավաքականություններ (Կնիե գյուղը, նաև՝ քանի մը ընտանիքներ

Յակուբիե և այլ գյուղերու մեջ), որոնց մոտ առավել առկայծ է իրենց հայկական ծագման ինքնագիտակցությունը:

4. Արաբախոս, բայց Հայ Առաքելական Եկեղեցվո դավանանքը պահպանած Յակուբիե գյուղը: Այս գյուղի բնակիչներն ունին հայկական ինքնագիտակցություն, թեև արաբախոս ըլլալու իրողությունը գիրենք որոշակիորեն կը տարբերակե հայու ամբողջական ինքնագիտակցությունն ունեցող դասական կերպարի ընկալումեն:

Վերը հիշատակված առաջին խումբի վերադարձը հայկական ինքնագիտակցության՝ բացառված է, մանավանդ, որ այդ խումբի անդամները իրենց ողջ էությամբ, հարյուր տոկոսով արաբացած ու իսլամացած ըլլալով, որևէ ցանկություն չեն դրսևորեր այս ուղղությամբ...

Երկրորդ խումբի պարագային, հայության գիրկն անոր վերադարձը չափազանց դժվար է: Այս խումբի անդամներուն քրիստոնյա ըլլալու իրողությունը և իրենց հայկական ծագման մասին աղոտ հիշողությունները եթե որոշակի հույսեր կներշնչեն, սակայն այդ ցանկություններու գործնականացման հավանականությունը շատ չնչին է: Այս հավաքականության մարդիկ իրենք ևս չեն գիտակցիր հայության գիրկը վերադառնալու օգտակարությունը և համակերպված են ու գոհ իրենց ներկա ազգային-դավանանքային-լեզվական վիճակեն:

Երրորդ խումբի անդամները, բծախնդրորեն մշակված քաղաքականության մը իրականացման պարագային, կարող են իրենց հայկական ինքնությանը վերադառնալ, չբացառելով նույնիսկ անոնց հայախոս դառնալու հեռանկարը: ...Այս գյուղերուն մեջ կան մարդիկ, որոնք անհատական ճիգեր կթափեն վերադառնալու մայր ազգին գիրկը, նույնիսկ հրաժարելով արաբախոսութենեն: Այս հավաքականությանց վերահայացմանը նպաստող կարևոր գործոն են վերջին տարիներուն այդ գյուղերուն վերածվիլը Հալեպի հայախոս հայոց սիրված ամարանոցներու և հայախոս ու հայկական ազգային արժեքներ կրող մարդոց հետ անոնց շփումներու անհամեմատ բազմացումը:

...Հայության մեջ ամբողջովին վերստին ծուլելու լավագույն պայմանները կան չորրորդ հավաքականության մոտ»:

Հ. Չոլաքյանը գտնում է, որ հնարավոր է «առհասարակ Մերձավոր Արևելքի հայազգի բոլոր լատինները վերստին հայությանը շաղկապել՝ Վատիկանի թույլտվությամբ զանոնք լատին եկեղեցվո ապազգային հովանիեն փոխանցելով Հայ կաթողիկե եկեղեցվո հովանիին, ինչպես այդ տեղի ունեցավ 1946թ. Քեսապի շրջանին մեջ՝ առանց որևէ լուրջ ցնցումի»: Լիովին համաձայն ենք այս դատողությանը: Մնում է, որ Հայ կաթոլիկ հոգևորականությունը գործնական քայլերի դիմի այս ուղղությամբ՝ եթե, իհարկե, ցանկություն ունի...

Գ. Հալեպ: Քաղաքի արաբախոս հայազգիները հիմնականում լատին են կամ հայ կաթոլիկ: Առաջինները Կնիեից տեղափոխվածներ, Կիլիկիայից գաղթականների ու 18-19-րդ դարերում լատին միսիոներների դավանափոխածների սերունդներ են: Արաբախոս լատինների

մոտ հայկական ինքնագիտակցությունը չափազանց թույլ է, և, որքան էլ տարօրինակ թվա, «հրահրվում» է ոչ հայազգի լատինների կողմից, որոնք նրանց լիարժեք լատին չեն ընկալում: Այդուհանդերձ, Հալեպի հայազգի արաբախոս լատինների մոտ ևս գերակշռում է անդերսոնյան «երևակայական համայնքի» գիտակցությունը:

Վիճակը շատ չի տարբերվում Հալեպի արաբախոս հայ կաթոլիկների մոտ, որոնք Մարդինի ու շրջակայքի արաբախոս հայ կաթոլիկների՝ Մեծ Եղեռնից հետո քաղաքում հաստատվածների, ինչպես և մինչև Մեծ Եղեռնը քաղաքում բնակություն հաստատած հայ կաթոլիկների սերունդներ են: Նրանց մոտ էլ առկա է անդերսոնյան համայնքի գիտակցությունը: Հալեպի հայախոս ու արաբախոս հայ կաթոլիկների միջև ճեղքն այնքան խորն է եղել, որ հայախոսներն անցյալ դարի վերջերին նախընտրեցին առանձին եկեղեցի կառուցել՝ միայն հայալեզու ծեսերով, քան շփվել իրենց արաբախոս դավանակիցների հետ՝ թեկուզ երկլեզու (հայերեն-արաբերեն) ծեսերի ժամանակ: Փաստորեն, Հալեպում այսօր կան հայ կաթոլիկ երկու հավաքականություններ, որոնք ազգային ինքնագիտակցության առումով էապես տարբերվում են իրարից՝ հիմնականում պայմանավորված լեզվական գործոնով:

Վերջին տարիներին Հալեպի հայության մոտ դիտվում են կամովին իսլամանալու առանձին երևույթներ, մասնավորաբար՝ արաբ մուսուլման երիտասարդների հետ հայուհիների (սիրիահայ և բուն ՀՀ-ից) ամուսնությունների հետևանքով: Կրոնափոխությունն ուղեկցվեց լեզվափոխությամբ, թեև ոչ քիչ պարագաներում իսլամ ընդունած հայուհիների զգալի մասը պահպանում է լեզուն, ամուսնու թույլտվությամբ՝ նաև քրիստոնեական հավատքը, թեև քրիստոնյա ազգակիցները նրանց վանում են իրենցից՝ որպես հավատուրացների:

Դ. Սիրիական անապատի շրջան: Մեծ Եղեռնի տարիներին հազարավոր հայեր սիրիական անապատի մահվան ճանապարհների վրա պարտադրված ընդունեցին իսլամը: Նրանց մեծ մասը թեև հետագայում վերադարձավ իր հավատքին ու ազգին, այսուհանդերձ ոչ քիչ թվով հայազգիներ (հատկապես՝ կանայք) նախընտրեցին կամ ստիպված եղան իսլամն ընդունել ու արաբանալ: Նրանց սերունդները պահպանել են իրենց հայկական ծագման հիշողությունը, և ոմանք նույնիսկ չեն դադարում իրենց հայազգի հարազատներին փնտրելուց: Այդուհանդերձ, այս իսլամացած-արաբացածների մոտ հայկական ինքնագիտակցությունը գտնվում է շատ ցածր մակարդակում, և, փաստորեն, անհնար է նրանց վերահայացումը:

Ե. Յուսիսարևելյան Սիրիա: Այս տարածաշրջանում կողք կողքի համերաշխորեն գոյակցում են Հայ Առաքելական և Հայ կաթոլիկ համայնքների անդամները, որոնք լեզվական տեսակետից բաժանվում են երեք ենթախմբերի՝ հայախոսներ, արաբախոսներ և քրդախոսներ: Ըստ ազգային ինքնագիտակցության վայրընթացի ցուցիչի՝ հաջորդականությունը հետևյալն է՝ հայ առաքելական հայախոսներ, հայ առա-

քելական քրդախոսներ, հայ կաթոլիկ հայախոսներ, հայ կաթոլիկ արաբախոսներ, հայ առաքելական արաբախոսներ, հայ կաթոլիկ քրդախոսներ (վերջիններիս քանակը շատ փոքր է): Այս բոլոր հավաքականությունները կամ Հայկական Միջագետքի (Աղձնիքի) տեղաբնիկներ են, կամ Սասունի ու Բշերիկի շրջաններից տեղափոխվածներ: Բշերիկցիները, չնչին բացառություններով, քրդախոս են. քրդախոս է նաև ծագումով սասունցիների մի մասը. այլալեզու լինելով հանդերձ՝ նրանց մոտ ազգային ինքնագիտակցությունն ու հայկական հայրենասիրությունը գտնվում են բարձր մակարդակի վրա, որի արտահայտությունն են 1940-ականների վերջի և 1960-ականների հայրենադարձություններին մասնակցությունն ու իրենց հայկական հույզերի արտացոլումը եղող քրդերեն բազմաթիվ երգերը: Հայտնվելով հայախոս միջավայրում (Հալեպ, Բեյրութ, ՀՀ)՝ մասնավորաբար նոր սերունդը շատ արագորեն հայախոս է դառնում ու համարյա հավասարվում «դասական» հայի մակարդակին: Այդուհանդերձ, քրդախոս հայերի մոտ դիտվում են քրդական ինքնագիտակցության առանձին դրսևորումներ, որոնք շուտով անհետանում են դասական հայկական միջավայրում հայտնվելու դեպքում: Ուշագրավ է, որ այս տարածաշրջանում տեղաբնակ ասորիների մի մասի մոտ նկատվում է հայկական որոշակի ինքնագիտակցություն. նրանցից ոմանք սեփական «հայկականությունն» ապացուցելու համար վկայակոչում են իրենց ... հայախոսությունը:

* * *

Այս հոդվածում փորձ արեցինք ներկայացնելու Լիբանանում և Սիրիայում այլադավան և այլալեզու հայկական խմբերի համայնապատկերը: Խոստովանում ենք, որ պատկերն իրականում շատ ավելի բարդ է, քան այստեղ է ներկայացված:

Հ. Չոլաքյանը գտնում է, որ Հայ Եկեղեցին ինքը պետք է նախաձեռնի «Սփյուռքի տարածքին ուծացած հայկական հավաքականությունները իրենց ազգին գիրկը վերադարձնելու պատմական առաքելությունը՝ առաջնորդվելով ոչ այնքան Հայ Եկեղեցվո, այլ հայ ազգի ընդհանրական ու գերագույն շահերով»: Չբացառելով այս հույժ կարևոր աշխատանքում Հայ Եկեղեցու դերը՝ այդուհանդերձ, գտնում ենք, որ ՀՀ-ն, որպես հայոց ազգային պետություն, ի՛նքը պետք է ստանձնի այս առաքելությունը: Մի՞թե հարկ կա պարզաբանելու, թե հայկական նման հավաքականությունները կկարողանան գործածվել ինչպես հօգուտ հայ ազգի ու հայոց ազգային պետության, այնպես էլ՝ նրանց դեմ: Հետևաբար, տվյալ հարցը ոչ միայն գիտական նշանակություն ունի, այլև, ու առաջին հերթին՝ ազգային անվտանգության խնդիր է:

Գևորգ Յազըճյան

«Հանրապետական», թիվ 11, 2004թ.

ՀԱՅ ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Թուրքիայի հայությունը կենցաղահասարակական ներքին հարաբերությունների տեսանկյունից և ուծացման ենթարկվելու իմաստով մեծապես այլատարր է և ներկայանում է դիմագծային տարբեր տիպերով:

Թուրքիայի Հայոց Պատրիարք Շնորհք Գալուստյանը 1980թ. Երուսաղեմում բանախոսության մեջ հետևյալն ասեց գավառահայության մասին. «Ձեզ կներկայացնեմ գավառահայության չորս խավերը, ինչպես որ տեսել եմ նրանց.

Ա. Հայեր, որոնք գիտակցաբար և կամավոր կերպով իսլամացել են, խզվել են հայությունից և ապրում են թուրքերի մեջ: Սրանք են, որ մինչև միլիոնի հասնում են իրենց թվով:

Բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են և քրդական աշիրեթական ձևերով ապրում են մեկուսի և չեն խառնվում:

Գ. Կամա թե ակամա իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահել են և Պոլիս հաստատվելուն պես՝ դատարանի միջոցով իրենց անձնագրի վրայի «իսլամ» գրությունը «էրմենի»-ով են փոխարինում:

Դ. Բուն գավառահայերը, որ պատիվ իրենց՝ հակառակ բոլոր զգալի և անզգալի դժվարություններին՝ հայ են մնացել, և այսօր Ստամբուլի հայության մեծագույն մասը նրանցից է բաղկանում»:

Թեև Շնորհք պատրիարքի այս տեղեկատվության համաձայն՝ ներկայիս կացությունը փոխված կարելի է համարել, այնուամենայնիվ, դա բավարար հիմք է հանդիսանում «Անատոլիայի» հայությունը տիպաբանական իմաստով բաժանել երեք էթնոկրոնական տեսակների:

«Պաշտոնական» հայություն

Այս տեսակը Հայ Առաքելական, Կաթողիկե կամ Ավետարանական եկեղեցիներին կապվող համայնքների տեսքով գոյատևել է զանազան նահանգներում և ավաններում: «Պաշտոնական» հայության կապը Կ.Պոլսի կազմակերպված համայնքի հետ քիչ թե շատ պահպանվել է մանավանդ պատմական Կիլիկիայում:

Հայության մյուս տեսակների համեմատությամբ՝ «պաշտոնական» հայության ներկա վիճակի մասին առավել շատ տեղեկություններ կան: Որոշ բացառությամբ նրա վիճակը այսօր ևս շարունակում է մնալ անմխիթար: «Թայմզ» օրաթերթը 1994թ. տվեց այն բանի ազդանշանը, որ Թուրքիայի դեմ մի նոր արշավ պիտի բացվի՝ քրիստոնյաների վրա ծանր ճնշումների առկայության հետ կապված: «Թայմզի» լուրը, մասնավորաբար, գրի է առնվել Թուրքիայի արևելյան նահանգներում ապրող քրիստոնյաների առնչությամբ:

3984

1995թ. հրատարակված «Հայերն աշխարհում» համառոտ հանրագիտարանը «պաշտոնական» հայության թվաքանակը գնահատում է մոտ 10 հազար:

«Իսլամացած» հայություն

Այս տեսակը հիմնականում բաղկացած է պոնտահայ և համշենահայ, մանր ու խոշոր տոհմական խմբերից, որոնք իսլամացել են 17-18-րդ դարերում և բնակվում են սևծովյան ափերիզում, պատմական Զանիկից (Սամսունից) մինչև հայ-վրացական սահմանները երկարող տարածքներում: «Իսլամացած» տիպն իր համեմատական լայն շրջագծում պարունակում է այստեղ նաև «կես-կես» և «հայ-լազ» կոչված խմբերին:

Հարվարդի և Կոլումբիայի համալսարանների լեզվաբանական շրջանակներում համբավ ունեցող Բերտ Վաուքսը համշենահայությունը հիմնականում բաժանում է երեք խմբի.

Ա. Արևմտյան համշենահայություն - Օրդուում, Տրապիզոնում և Ռիզեում ցրված, թուրքախոս և իսլամին հարած,

Բ. Արևելյան համշենահայություն - առավելաբար Արդվինում բնակվող, համշենահայ բարբառով խոսող և իսլամին հարած,

Գ. Հյուսիսային համշենահայություն - Վրաստանում և Ռուսաստանում բնակվող, համշենահայ բարբառով խոսող և քրիստոնյա:

Իսլամացած և Թուրքիայում բնակվող առաջին երկու խմբերի թվաքանակը գերակշռում է Թուրքիայի սահմաններից դուրս բնակվող վերջին խմբին:

Wikipedia համացանցային հանրագիտարանը Թուրքիայի համշենցիների կամ հեմշինլիների համար նման մի տեսակավորում է նկատի առնում՝ արևմտյան խումբը կոչելով «Բաշ-հեմշինցիներ», իսկ արևելյան խումբը՝ «Հոփա-հեմշինցիներ»:

Հարավային Կալիֆորնիայի համալսարանի քաղաքագիտության թեկնածու Հովան Սիմոնյանը Ռիզեում բնակվող արևմտյան համշենահայության (կամ բաշ-համշենցիության) թվաքանակը գնահատում է 15-23 հազար: Նույն աղբյուրի հիմամբ՝ Սիմոնյանը Հոփայի (պատմական Խոպա) արևելյան համշենահայերի թիվը ներկայացնում է 25 հազար:

Նշանակում է, որ ի տես Խոպայի բնակչության, այժմ համշենահայությունն այդտեղ կազմում է բնակչության բացարձակ մեծամասնությունը: Այս նշանակալի իրողությունը հաստատվում է նաև Armeniapedia էլեկտրոնային հանրագիտարանի հեղինակների կողմից: Թուրքիայի համշենահայության թվաքանակի մասին վկայությունները բավական տարբեր են ու այլազան:

Թեսա Հոֆմանի գնահատմամբ՝ «այնտեղ 20 հազար մուսուլման համշենցիներ կան, որոնց հայրենիքը գտնվում է Տրապիզոնի և Էրզրումի արանքում»:

Դժվար է ճշտել, թե որոնք են համշենահայության թվաքանակի թերագնահատման պատճառները: Վիճակագրական ստույգ տվյալների բացակայության պայմաններում՝ մենք գտնում ենք, որ Թուրքիայի պետական շրջանակներում առկա է պոնտահայերին պոնտացի հույներ, բաշ-համշենցիներին՝ լազեր ու արևելյան համշենահայերի մի բաժնին՝ վրացիներ ներկայացնելու միտումը, որի խորքում, իհարկե, ընկած է հակահայ տրամադրվածությունը:

Իսլամական հասարակության սեկուլարացման ինստիտուտի համանուն կայքէջում մի «իսլամացած» հայ իր 16 սեպտեմբեր, 2002 թվակիր էլեկտրոնային նամակում գրում է. «Հայախոս մուսուլմաններով բնակեցված գյուղեր կան: Որոշ աղբյուրներ նրանց թվաքանակը գնահատում են շուրջ 2 միլիոն»:

Ըստ բուն համշենահայ «Գյոթե» համալսարանի գիտաշխատող, Թուրքիայի նախկին վարչապետ Մեսութ Յըլմազի ազգականուհի Ալիե-Ալիս Ալթի (Կոստանյան). «Այսօր ավելի քան մեկ միլիոն իր ազգակիցները գտնվում են ազգային ինքնագիտակցության ու զարթոնքի գործընթացում»: Ալիե Ալթի զավակ, գերմանաբնակ Դենիզ Ալթի հարցազրույցում նկարագրվում է համշենահայության վիճակը և հստակորեն ակնարկվում Թուրքիայի շուրջ 1,5 մլն հաշվվող համշենահայերի մասին:

Թեև կրոնական այլասերումը անցանկալի իրականություն է համշենահայերի համար, բայց որոշ տվյալներով ապացուցվում է, որ իսլամի նկատմամբ նրանց հավատքը հեռու է սուննիզմին հատուկ մոլեռանդությունից: «Համշենները շատ կրոնական չեն,- պարզաբանում է Հովան Սիմոնյանը իր դասախոսություններից մեկում,- նրանք շատ քիչ մզկիթներ ունեն, և շատ քիչ մարդիկ են ուշադրություն դարձնում դրանց: Համշենցիները նաև օգտագործում են ալկոհոլիկ խմիչքներ»:

Թուրքիայի համշենահայերը վերջին տարիներին ազգային գիտակցության զարթոնքի մեծ աշխուժություն են ցուցաբերում: Այս իմաստով հատկանշական են նրանց ինքնարծարծման ելույթներն ու հոդվածները՝ մի շարք կայքէջերում և էլեկտրոնային ֆորումներում:

«Թաքուն» հայություն

Այս տեսակը բռնի կերպով և իր ֆիզիկական գոյությունը պահելու հարկադրանքի տակ իսլամացել է հայկական պարբերական կոտորածների և, մասնավորաբար, 1915թ. Ցեղասպանության արդյունքում և ապրում է բազմաթիվ առանձին, քրդաբնակ ու թուրքաբնակ գյուղերում, գյուղակներում: Այս տեսակը վերոնշյալ «իսլամացած» տեսակից տարբերվում է իր իսլամացման ժամանակով և գործընթացով:

Ներկա «Անատոլիայում» բնակված հայությունը, իր էթնիկական վերակերպված տիպերով, շարունակում է մնալ խորհրդավոր և գրեթե

անճանաչելի: Մյուսների համեմատությամբ «թաքուն» հայերի պարագան, թերևս, ամենաբարդը պիտի համարել:

Փաստերից և ապացույցներից երևում է, որ այժմ «թաքուն» հայություն է ապրում կենտրոնական և արևելյան Թուրքիայի բազմաթիվ շրջաններում, հատկապես՝ Արևմտյան և Հարավ-արևմտյան Հայաստանում:

Քեռան էվրենի զինվորական իշխանությունների ժամանակից սկսած և հատկապես 90-ական թվերի ընթացքում թուրքական բանակն ավերել կամ այրել է բազմաթիվ գյուղեր և գյուղակներ Թուրքիայի արևելյան գավառներում և տեղահանել շուրջ երեք միլիոնի հասնող բնակչություն: Այս զանգվածային վանդալիզմից չէր կարող զերծ մնալ հայությունը: Մեզ դեռ հայտնի չէ հայկական գյուղերի կրած մարդկային և նյութական վնասների ճշգրիտ չափը: Մարդկային իրավունքների պաշտպան մի կայքէջում ասվում է. «Թվով 729 գյուղեր (թե՛ քրդական և թե՛ քրիստոնեական) դատարկվել են անվտանգության ուժերի միջոցով»:

Մեր տրամադրության տակ «թաքուն» հայության ընդհանուր թվաքանակի բնորոշման համար քիչ տվյալներ կան:

Թեսա Հոֆմանը «crypto-armenians» կամ «թաքուն» հայերի թվաքանակը գնահատում է 30-40 հազար: Մեր համոզմամբ այս թվաքանակը խիստ թերագնահատված է:

Մյուս կողմից, գերագնահատված մի թվաքանակի մասին ակնարկներ կան Քրդստանի աքսորյալ խորհրդարանի փաստաթղթերում: Ընդ որում, այսպես կոչված «Մեծ Քրդստանի» սահմաններում ապրող ասորի և հայ բնակչության թվաքանակի գումարը գնահատվում է ամբողջական բնակչության շուրջ 10 տոկոսը:

Եթե Թուրքիայի քրդերի միջին թվաքանակը 15 միլիոն համարենք, ապա ասորի և հայ բնակչության թվաքանակը, ըստ վերոնշյալ հիմնավորման, պիտի գնահատել շուրջ 1,5 միլիոն:

Քրդական «Ozgur politik» էլեկտրոնային թերթի 1997թ. դեկտեմբերի համարը ևս ակնարկում է նման մի թվաքանակ՝ ասելով, որ «քրդական տարածքներում» սուրիական և հայկական ծագումով 2 միլիոն «քրդեր» կան:

Ասորի և հայ բնակչության համար 1,5 միլիոն թվաքանակը թեև առայժմ փաստարկելի և ստուգելի չէ, սակայն լուրջ նկատառման է արժանի: Այնուամենայնիվ, հայ մնացորդացի բնական աճը նկատի առնելով՝ «թաքուն» հայության թվաքանակը առնվազն մի քանի հարյուր հազար կարելի է հաշվել:

Թուրք առաջադեմ մտավորական Քեմալ Յալչինը մի հարցազրույցի ընթացքում ահա այսպես է բնութագրում մերօրյա «թաքուն» հայերին. «Այդպիսի ընտանիքներն ապրում են որպես քուրդ կամ թուրք մուսուլմաններ, և նրանց երեխաներն իրենց մայրենի լեզուն չեն

սերտում: Իմ տեսած թաքուն հայերից շատերը 15-17 տարեկաններ էին, որոնց ծնողները նրանց զգուշացրել էին չխոսել այդ մասին»:

Իսկ «թաքուն» հայության քաղաքական տիպարի և ուղղվածության մասին լիարժեք գաղափար կազմելու համար շահեկան կարող է լինել նաև այն բնույթի փաստերին ակնարկելը, որոնք վկայում են քրդական կազմակերպությունների շարքերում ծագումով հայ անդամների մասին:

«Գորշ գայլեր» աշխատության հեղինակներ Ս. Բրամը և Մ. Ուլգերն ասում են, որ Թուրքիայում PKK-ն հաճախ է ներկայացվում որպես «հայ ստրուկներից» բաղկացած կառույց: Գորշ գայլերի երբեմնի առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշը նույնիսկ բերանից բաց է թողել, որ «Աբդուլահ Օջալանը քուրդ չէ, այլ հայ, և իր իսկական անունն էլ Հակոբ Արթինյան է»:

Թուրքական մի շարք աղբյուրներ, առևտրական շրջանակներում համբավ ունեցող Բեհչեթ Ջանթուրքին ներկայացնելով որպես PKK նյութական գործերի և հայ ահաբեկչական խմբերի հետ կապերի պատասխանատու՝ շեշտում են, որ նա «ծնվել է 1950թ. Դիարբեքիրում, քուրդ հորից և հայ մորից»:

Մյուս փաստը վերաբերում է PKK նախագահական խորհրդի անդամ Նուրիե Գեսպիրի և դրա կենտրոնական կոմիտեի անդամներ Պեքիր Պաքրճյանի և Մուսա Հաճըևի հայկական ծագմանը, որն առաջինը բացահայտել է «Թուրքիե» օրաթերթը 2002թ. նոյեմբերին:

Ազդեցիկ «Միլլիեթ» թերթում Թուրքիայի ռազմական արտակարգ դրության կառավարիչ Իվնիլ Էրքանը հայտարարել է. «Մեր համակարգիչներում արձանագրել ենք հայկական ծագում ունեցող PKK 800 անդամներ»:

Բիթլիսի տանկային ստորաբաժանման հրամանատար, գեներալ Թագման մամուլին տված մի հարցազրույցում պնդում էր, որ «PKK ամեն յոթերորդ անդամը հայ է: PKK այդ անդամները զավակներն են այն հայերի, ովքեր Օսմանյան կայսրությունը կռնակից դաշունահարեցին Առաջին աշխարհամարտի ընթացքում»: Նույն գեներալ Թագման 1995թ. մի այլ առիթով ևս հայտնում էր, որ տեղի ունեցած ինչ-որ ծանր մարտերի ընթացքում «քրդեր չկային այնտեղ: Նրանք, ովքեր մեր ստորաբաժանման ուժերի գրոհների արդյունքում նահանջեցին դեպի լեռները, հայեր էին»:

Եվրոպայում հաստատված մի քանի «թաքուն» հայերի հետ առանձին հարցազրույցներից պարզվում է, թե ինչպես նրանցից ոմանք աշխատել և պայքարել են PKK շարքերում և Օջալանի գերեվարությունից հետո հիասթափվելով որոշել են վերադառնալ մայր հայրենիք կամ մեկնել Հոլանդիա, Գերմանիա և այլուր:

PKK էլեկտրոնային տեղեկատուներից մեկում կարդում ենք հայաբնակ Սայլակկայա (Ջրին) պատմական գյուղում 1970թ. ծնված

հայ երիտասարդ Հուսեյն Սարիչիյեքի մասին, որը զոհվել է Թուրքիայի բանակի դեմ մարտերում 1988թ.:

Թուրքիայի ծայրահեղ ձախ հոսանքներից մեկի՝ TIKKO կազմակերպության համացանցային էջում կարելի է հանդիպել 1946թ. Ամասիայում ծնված Կարպիս Ալթինօղլուի անվանը, կենսագրականին և նրա քաղաքական-տեսական հոդվածներին, ընդ որում՝ հաճախ է հիշատակվում նրա հայ լինելու պարագան:

Առավելաբար զազա-ալևիական շրջանակներում աշխատող և Դերսիմի լեռներում մաքառող նույն այդ TIKKO կազմակերպության զոհվածների ցանկում հանդիպում ենք երեք հայ երիտասարդների կենսագրականներին.

Արմենակ Բաքչյան - ծնված Տիգրանակերտում 1953թ., զոհված Խարբերդում 1980թ.: Նուբար Յալիմ - ծնված Մարդինում 1957թ., զոհված Ամստերդամում 1982թ.: Մանուել Դեմիր - ծնված Կեսարիայի Բունիան քաղաքում 1963թ., զոհված Ստամբուլում 1988թ.: Հետաքրքիր է իմանալ, որ Մանուել Դեմիրի հերոսական տիպարին ու սխրանքներին նվիրված թուրքերենով երգ է հորինվել, որը հնչում է քրդական շրջանակներում:

* * *

Այսպիսով, բազմաթիվ լրագրություններ, հաղորդագրություններ և ուղեգրություններ բավարար հիմք են տալիս եզրակացնելու, որ ներկայումս տարբեր տիպերով հայության հետքեր կան անատոլիական առնվազն 80-90 քաղաքներում, գյուղերում և գյուղակներում:

Տիպաբանական բնորոշմամբ հանդերձ՝ դյուրին չէ մեր խնդրո առարկա հայ բնակչության թվաքանակի մասին վերջնական տեսակետ հայտնել: Այդուհանդերձ, մեջբերում ենք մի քանի վկայություններ:

Իսլամական «Jihadwatch» էլեկտրոնային թերթն իր 2005թ. փետրվարի 17-ի համարում գրում է . «Մինչև մեկ միլիոն հայեր են դեռ ապրում Թուրքիայում»:

«Գյոթե» համալսարանի գիտաշխատող Ալիե-Ալիս Ալթքի համոզմամբ. «Մինչ երեք միլիոն թուրքացած հայեր կան, որոնք փորձում են իմանալ իրենց ծագման մասին, տասնամյակների լռությունից հետո...»:

Կարիքավոր եկեղեցիների օժանդակության հիմնարկի Թուրքիայի մասին 1998թ. զեկուցագրում կարդում ենք. «20 հազար բապտիստ քրիստոնյաներին իրականում պիտի գումարել ևս չորս ու կես միլիոն քրիստոնյաների, որոնք այնտեղ ապրում են կեղծ և թաքուն ինքնությամբ»:

Այսինքն, կարելի է եզրակացնել, որ «Անատոլիայի» «պաշտոնական» հայությունը մեր հետազոտության աշխարհագրական շրջագծում կազմում է աննշան թվաքանակ, թերևս հինգ հազարից պակաս, «իսլամացած» հայության թվաքանակը՝ անցնելով միլիոնի սահմանը,

կազմում է շուրջ 1.300.000 մարդ, իսկ «թաքուն» հայությունը՝ ավելի քան 700 հազար մարդ:

Ամեն դեպքում՝ իրողությունն այն է, որ ստվար թվով հայ էթնիկական տարր կա Թուրքիայի արևելյան տարածքներում, Արևմտյան և Հարավ-արևմտյան Հայաստանում, պատմական Կիլիկիայում, ինչպես նաև Փոքր Հայքում ու հարակից շրջաններում. էթնիկական վերակերպված տարր, որ մաքառում է ինքնաճանաչման և իր ինքնության պահպանման համար: «Մեզ մի՛ մոռացեք,- դիմում է բուն սասունցի, այժմ Մուշում բնակվող Արմեն Մարտիրոսյանը,- Վարդոյի և այլ շրջաններում վերապրող շատ հայեր կան: Հայեր, որոնք մինչև վերջերս վախենում էին իրենց ինքնությունը հայտնել, բայց այսօր խիզախաբար արտահայտվում ու մաքառում են հայ մնալու համար»:

Թուրքիայի էթնոկրոնական խմբերի համատեքստում հայ մնացորդացի կամ վերակերպված հայության հարցը դեռ կարոտ է խորքային վերլուծությունների: Այդ հսկայական ներուժը կարող է կա՛մ ընթանալ սոսկ տարերային զարտուղիներով, շահագործվել այլևայլ համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի կողմից և ի վերջո մարել կա՛մ վերածվել ազգային շարժման ու վերազարթոնքի:

Կարեն Խանլարյան

«Հանրապետական», թիվ 8, 2005թ.

«ԾՊՏՅԱԼ» ՀԱՅԵՐԻ ԿՐՈՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
(ըստ թուրքական աղբյուրների)

Վերջին տարիներին տարբեր շրջանակներում բավականին աշխուժացել է հետաքրքրությունը Թուրքիայում բնակվող իսլամացած և «ծպտյալ» հայերի նկատմամբ:[1] Հարկ է նշել, որ արդեն տևական ժամանակ է, ինչ հենց այդ հայերի սերունդները սկսել են ինքնաբացահայտվել՝ փնտրել իրենց արյունակիցներին, ազգականներին, իսկ Եվրամիության անդամակցությանը ձգտող Թուրքիայում ներկայումս արտաքուստ խրախուսվող, սակայն թվացյալ ազատության սահմանները բոլոր դեպքերում նպաստում են դրան: Տարիներ շարունակ այս թեմաների նկատմամբ Թուրքիայում գործադրված արգելքը սկսում է ճաքեր տալ և պատճառ դառնալ «էթնիկ պատկանելության ճգնաժամի» ի հայտ գալուն: Հրանտ Դինքը այս հանգամանքը դիպուկ է բնութագրել՝ ասելով. «Ներկայումս Թուրքիայում շատերը դեգերում են իրենց էթնիկ պատկանելության լաբիրինթոսում»:

Օրեցօր նոր ծավալներ ընդգրկող այս հարցն արդեն իր արտացոլումն է գտել թուրք ժամանակակից գրականության մեջ, և մի շարք հեղինակներ, ինչպիսիք են՝ Ֆեթհիյե Չեթինը, Իրֆան Փալալը, Քեմալ Յալչընը, անդրադառնում են իսլամացած ու «ծպտյալ» հայերի հարցին: Այդ հեղինակների ստեղծագործությունները, ունենալով փաստագրական հիմք, կարևոր են խնդրի համակողմանի լուսաբանման համար, բայց դրանցում (թերևս, որոշ բացառություն կարելի է համարել Ֆեթհիյե Չեթինի «Մեծ մայրս» վիպակը) երբեմն դրվում են նաև քողարկված ենթատեքստեր, որոնք վրիպելով սովորական ընթերցողների աչքից տեղիք են տալիս ավելորդ հիացական գնահատականների:

---

[1] *Իսլամացած հայ ասելով (խոսքն ավելի վաղ իսլամացած համշենահայերի մասին չէ) նկատի ունենք Հայոց Ցեղասպանության ժամանակ առևանգված հայ կանանց, երեխաներին, որոնք իսլամացվելով ամուսնացել են թուրքերի և քրդերի հետ: Սրա հետևանքով ներկա Թուրքիայում ձևավորվել է խառնածինների մի հոծ բանակ, որոնց մի մասն ընդունում է իր կիսահայկական ծագումը, իսկ մի մասը՝ ժխտում կամ փորձում է կարևորություն չտալ դրան: Բռնի խլված և իսլամացած հայ երեխաները թուրքական աղբյուրներում անվանվում են «որդեգիրներ»: Իսկ «ծպտյալ» հայերը ցեղասպանության ժամանակ առերես իսլամ ընդունած, արտաքուստ թուրք, քուրդ մուսուլման ներկայացող, բայց գերակշիռ դեպքերում իրենց ազգային-կրոնական նկարագիրը գաղտնի շարունակող, ներփակ համայնքներով ապրող, խառնամուսնություններից խուսափող մեր ազգակիցներն են, որոնք իսլամ ընդունելու միջոցով զերծ են մնացել կոտորվելուց և տասնամյակների ընթացքում՝ հիմնականում խուսափելով ձուլումից, կարողացել են հայկականությունը շարունակել մինչև մեր օրերը:*

«Ծպտյալ» և իսլամացած հայերի խնդիրը սկսել է լրջորեն մտահոգել նաև թուրք գիտական շրջանակներին[1], և սրա վկայությունն են այն ուսումնասիրությունները, որ այժմ արվում են այս ուղղությամբ: Այսպես, արդեն տպագրված մի շարք հոդվածների կողքին 2006թ. Ստամբուլում լույս է տեսել և արդեն հասցրել վերահրատարակվել թուրք լրագրող Էրհան Բաշյուրթի «Հայ որդեգիրները» գիրքը, որտեղ քննության է առնվում Հայոց Ցեղասպանության ժամանակ իրենց ծնողներից խլված կամ որբ մնացած, այնուհետև բռնի իսլամացված և թուրքերի ու քրդերի կողմից որդեգրված հայ երեխաների խնդիրը: Հիշյալ գրքում, որը, թերևս, այս թեմայով հրատարակված առաջին գիտական աշխատանքներից է, ներկայացված են հետաքրքիր որոշ փաստեր ոչ միայն իսլամացած, այլև «ծպտյալ» հայերի մասին: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, թուրք լրագրողը չի խուսափել կողմնակալ, անհիմն գնահատականներից, փաստերի խեղաթյուրումներից, քաղաքական ենթատեքստերից և այլն: Բայց և այնպես, աշխատանքի շահեկան կողմերից կարելի է համարել այն, որ սույն գրքում «ծպտյալ» հայերի մասին ձեռք ենք բերում որոշակի աղբյուրներ, որոնք գալիս են լրացնելու այս խնդրի վերաբերյալ մեր ունեցած սակավաթիվ նյութերի շրջանակը: «Ծպտյալ» հայերի վերաբերյալ մանրամասն ուսումնասիրության կարելի է հանդիպել նաև Հաքան Գյուվենի «Աքսիոն» հանդեսում տպագրված (14.03.2005) «Վերադառնում են իրենց իրական կրոնին» վերնագրով հոդվածում, որից էլ ընդարձակ մեջբերումներ են արված նաև Բաշյուրթի նշյալ գրքում: «Ծպտյալ» և իսլամացած հայերի մասին «Տատս հայ էր» վերնագրով ընդարձակ հոդվածով է հանդես եկել նույն Էրհան Բաշյուրթը «Աքսիոն» հանդեսի մեկ այլ (26.12.2005) համարում: Այս և նման այլևայլ հրապարակումները ցույց են տալիս, որ թուրքական տարբեր շրջանակներ հետաքրքրված են և մեծ ուշադրությամբ

---

[1] *Ավելորդ չէ նշել, որ Թուրքիայի պատմական ընկերության նախագահ, հայտնի պատմաբեղծարար Յուսուֆ Հալաչօղլուն «Միլլիյեթ» թերթի 25.02.2007 համարում անհանգստություն է հայտնել Հրանտ Դինքի թաղման արարողության մասնակիցների թվաքանակի ու հնչեցված «բոլորս հայ ենք» կարգախոսի վերաբերյալ: Ըստ Հալաչօղլուի՝ Դինքի թաղման արարողությանը մոտավորապես 50.000-անոց հայկական համայնքից կարող էր մասնակցել 20.000 հայ և 10.000 էլ իրենց բողոքի ձայնը անկեղծ բարձրացնող թուրքեր, այսինքն՝ մոտ 30.000 մարդ: «Իսկ ովքե՞ր են մնացածները,- հարցնում է Հալաչօղլուն և ավելացնում,- անհրաժեշտ է այժմ այս ամենը շատ լավ ուսումնասիրենք և իմանանք»: Այնուհետև, մեջբերելով Դինքի այն միտքը, թե Թուրքիայում մուսուլման հայեր էլ կան, Հալաչօղլուն կասկած է հայտնում, թե միգուցե թաղման թափորի մնացած մասնակիցներն այդ հայերն են եղել և առաջարկում, որպեսզի պետական հետազոտական հաստատությունները դրան գնահատական տան:*

հետևում են «ծպտյալ» հայերի շրջանակներում կատարվող յուրաքանչյուր զարգացմանը:

Վերը նշվածի խոսուն վկայությունն է այն հանգամանալից հետազոտությունը, որ կատարվել է Թուրքիայում՝ իսլամից հրաժարված և այլ կրոն՝ հիմնականում քրիստոնեություն ընդունած քաղաքացիների մասին: Այս խնդիրը քննության է առնվել նաև միսիոներական շարժման նոր թափ ստանալու համատեքստում: Հետազոտության մեջ ներկայացված է, թե Թուրքիայում եկեղեցու վերածված ինչքան տներ են գործում, քանի Ավետարան է բաժանվել մարդկանց և այլն: Սրանով փորձ է արվել պատասխանել նաև բավականին աշխուժորեն քննարկվող «քրիստոնեություն ընդունող թուրքերի» խնդրին, և ի վերջո եկել են այն եզրակացության, որ կրոնափոխվածների գերակշիռ մասը ոչ թե թուրքեր են, այլ Թուրքիայում ապրող այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչներ (հայեր, հույներ, ասորիներ): Նշված հետազոտության ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրվել են բնակչության գրանցամատյանները, ավելի քան 100 տարվա ընդգրկմամբ, որպեսզի տրվի այս հարցերի հստակ պատասխանը: Արդյունքում, հայտնի են դարձել նաև հայերիս համար հետաքրքիր որոշ տվյալներ: Այսպես, պարզվել է, որ 1916–2004թթ. ընթացքում Թուրքիայում իսլամից պաշտոնապես հրաժարվել է մոտ 2000 քաղաքացի և մանրամասն ուսումնասիրությունը ի հայտ է բերել, որ նրանց մեծ մասը կամ ավելի կոնկրետ՝ 1340-ը, ծագումով հայեր են, որոնք վերընդունել են քրիստոնեություն: Հետազոտողները եկել են այն եզրահանգման, որ վերոնշյալ 1340 հայերը ոչ թե կրոնափոխ են, այլ կրոնադարձ, քանի որ բնակչության գրանցամատյանների ուսումնասիրության ընթացքում (ընդ որում՝ նաև օսմանյան ժամանակաշրջանի) վեր է հանվել այդ կրոնադարձների մինչև 3-րդ, 4-րդ պորտի նախնիների էթնիկ և կրոնական պատկանելությունը, և պարզվել է, որ հիշյալ մարդիկ ծագումով հայեր են, որոնց նախնիները Հայոց Ցեղասպանության ժամանակ առերես ընդունել են իսլամ, որպեսզի ազատվեն աքսորից ու կոտորածից, իսկ իրականում շարունակել են գաղտնի պահել քրիստոնեական ավանդույթները: Այլ խոսքերով ասած՝ դրանք «ծպտյալ» կամ «կրիպտո» հայերն են:

Ե՛վ Էրհան Բաշյուրթի գրքում, և՛ Հաքան Գյուվենի հոդվածում ամենայն մանրամասնությամբ ներկայացված է անգամ կրոնադարձության աշխարհագրությունը: Այսպես, կրոնադարձությունն ավելի շատ կատարվել է Ստամբուլում, ապա դրան հետևում են Դիարբեքիրը, Ադըյամանը, Բաթմանը, Սիվասը (Սեբաստիա), Թունջելին և Մալաթիան: Ավելին, Ստամբուլում կրոնադարձությունն ուսումնասիրել են նաև ըստ թաղամասերի, և արդյունքում պարզվել է, որ կրոնադարձներն ավելի շատ գրանցված են Ստամբուլի Ֆաթիհ թաղամասում (մոտ 150 մարդ), որին հետևում են Շիշլի և Էմինօնյու թաղամասերը: Ավելորդ չի լինի ներկայացնել նաև «ծպտյալ» հայերի կրոնադարձության մի քանի կոնկրետ փաստեր, որոնք տեղ են գտել հիշյալ աղբյուրներում.

1. 1971թ. Թունջելի նահանգի Դոլուքյուփ գյուղում գրանցված 1947թ. ծնված, էթնիկ հայ Սեֆեր Աքյուզը, որ շրջապատում հայտնի է եղել որպես մուսուլման, դիմելով քաղաքացիական հարցերով Ստամբուլի 1-ին ատյանի դատարան, հրաժարվել է իսլամից և ընդունել քրիստոնեություն: Այնուհետև, մի քանի տարվա ընթացքում նույն ընտանիքից 34 հոգի ևս ընդունել են քրիստոնեություն:

2. 1995թ. Յոզգաթ նահանգի Բողազլըյան գավառում գրանցված Հաջի Սարըքայան ընդունել է քրիստոնեություն, իսկ նրանից մի քանի տարի առաջ և մի քանի տարի հետո նույն քայլին են դիմել նաև նրա 14 ազգականները: Վերջինը քրիստոնեության է անցել Օզնուր Սարըքայան, 2003թ.:

3. Սասունում գրանցված Ջենգիլների ընտանիքից 1975թ.-ից մինչև 2003թ. 9 մարդ ընդունել են քրիստոնեություն:

4. Պատահում է նաև, որ կրոնի հետ միասին փոխում են նաև անունները և ընդունում հայկական անձնանուններ: Օրինակ, Էլյազիգի նահանգի Քեբան գավառում գրանցված Թյուրքան Աքջան, 1995թ. ընդունելով քրիստոնեություն, փոխում է նաև անունը՝ դառնալով Մարիամ Սարգսյան:

5. 1993թ. Թունջելիում գրանցված 84-ամյա Մուսթաֆա Աթեշը, որը մասնակցել է նաև 1937թ. Դերսիմի ապստամբությանը՝ «դարբին Մուսթաֆա» անունով, վերադարձել է քրիստոնեության:

6. Կրոնադարձվածների ցուցակում մեր հանդիպած տարիքով ամենափոքրը 2004թ. փետրվարի 19-ին ծնված, Ստամբուլում գրանցված Մելիսա Չաքըրն է, որի ծնողների (Սյուզան և Սարգիս) 2004թ. մայիսի 27-ի դիմումի համաձայն՝ փաստաթղթերում փոխվել է նրա կրոնական պատկանելությունը:

Ի դեպ, գրեթե բոլոր կրոնադարձված հայերին ներկայացնելիս տրվում է նաև նրանց տոհմածառը:

Վերոնշյալ փաստերից պարզ է դառնում, որ երբեմն կրոնադարձվում են ամբողջ ընտանիքով, ազգականներով: Սակայն պատահում է նաև, որ միևնույն ընտանիքից կրոնադարձվում են ոչ բոլորը և ստացվում է տարօրինակ պատկեր, երբ, օրինակ, հինգ եղբայրներից երեքը, բացահայտելով իրենց հայկական ծագումը՝ ընդունել են քրիստոնեություն, իսկ մյուս երկու եղբայրները շարունակում են գրանցված մնալ իբրև մուսուլմաններ:

Թուրք հետազոտողներն ուշադրություն են հրավիրում նաև այլ հանգամանքների վրա: Օրինակ, արձանագրվել է, որ «ծպտյալ» հայերը մեծ թիվ են կազմում հատկապես քրդերի և ալևիների շրջաններում: Նշվում է, որ մեր «ծպտյալ» ազգակիցները, համարյա առանց բացառության, խուսափում են խառնամուսնություններից, նախընտրում են ներքին ամուսնություններ, այսինքն՝ ձգտում են ամուսնանալ միայն իրենց բախտակից «ծպտյալ» հայերի հետ, ինչը նրանց հնարավորություն է տալիս շարունակել հայ-քրիստոնեական ավանդույթները և

մաքուր պահելով արյունը՝ ի վերջո էթնիկ հայ մնալ: Բացի այդ, կյանքի այս ներփակ բնույթը թույլ է տալիս դեռևս չբացահայտված «ծպտյալներին» գաղտնի պահել իրենց իրական էթնիկ պատկանելությունը և շարունակել արտաքուստ ներկայանալ որպես թուրք և քուրդ մուսուլման:

Թուրքական աղբյուրները ևս մի հետաքրքիր նրբերանգի վրա են ուշադրություն հրավիրում՝ արձանագրելով, որ «ծպտյալ» հայերը ձգտում են ձեռք բերել մեկից ավելի գրանցում, բացի այդ, հաճախ փոխում են գրանցումը՝ այդ կերպ փորձելով «կորցնել հետքերը»: Հայտնի է, որ թուրքական համապատասխան գերատեսչություններում կրոնափոխ, որդեգիր հայերն ու նրանց սերունդները[1] հատուկ գրանցված են, և դա արված է նաև այն նպատակով, որպեսզի իշխանությունների համար անվստահելի այս խմբից մարդիկ չգրավեն պատասխանատու պաշտոններ և չունենան լծակներ ու, բացի այդ, մնան մշտական հսկողության տակ:

«Ծպտյալ» հայերի կրոնադարձության դեպքերին անդրադառնալիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ երկու հանգամանքների վրա.

1. Ըստ իսլամի, այն մարդիկ, որոնք, ընդունելով մուսուլմանություն, այնուհետև հրաժարվում են այդ հավատից, ենթակա են մահապատժի: Սակայն, քանի որ Թուրքիան կրոնապետություն չէ, ուստի այդ պատիժը չունի օրենքի ուժ, բայց դա չի բացառում, որ իսլամից հրաժարվածները կրոնական ծայրահեղականների կողմից որպես թիրախներ կարող են ընկալվել: Բացի այդ, հոգեկան առումով չափազանց դժվար է «ծպտյալներին» արտաքին աշխարհից շարունակ թաքցնել իրենց էթնիկ և կրոնական պատկանելությունը, բայց, միևնույն ժամանակ, հեշտ չէ նաև թուրքական իրականության պայմաններում բացահայտ ապրել որպես հայ-քրիստոնյա: Այսինքն, այս կրոնադարձությունը նույնիսկ Եվրամիության անդամակցությանը ձգտող Թուրքիայում պետք համարել որոշակի խիզախություն: Հարկ ենք համարում ավելացնել նաև, որ կրոնադարձության դեպքեր են գրանցվում նաև Եվրոպա արտագաղթած «ծպտյալ» հայերի շրջանում. եվրոպական ազա-

[1] *Թուրքիայում բազմաթիվ են դեպքերը, երբ իրենց ծնողների կրոնափոխ, այսինքն՝ հետագայում իսլամ ընդունած լինելը պարզվում է այն ժամանակ, երբ նրանց զավակները դիմում են պատասխանատու պաշտոն ստանձնելու կամ զինվորական աշխատանքի անցնելու համար և ստանում մերժում իրենց ծնողների հավատափոխ լինելու հանգամանքով պայմանավորված: Նման դեպքերում ծնողների տարիներով թաքցրած գաղտնիքը բացահայտվում է, և բարեպաշտ մուսուլմանի համարում ունեցող կամ իրեն զտարյուն թուրք կարծող մարդիկ ապրում են հոգեբանական խոր ճգնաժամ:*

տության պայմաններում այդ քայլին դիմելը, ինչ խոսք, շատ ավելի հեշտ է և անվտանգ:

2. Շատ հաճախ «հայ» և «քրիստոնյա» հասկացությունները նույնացվում են: Հենց այս պատճառով էլ «ծպտյալ» հայերի կրոնադարձությունն ինչ-որ առումով կարելի է համարել նաև վերադարձ դեպի ազգային ակունքներ՝ ազգադարձություն: Հայոց Ցեղասպանությունից ավելի քան 90 տարի հետո էլ՝ ապրելով և մաքառելով անասելի դժվարին պայմաններում, առերես կրոնափոխված «ծպտյալ» հայերը կարողացել են պահպանել ազգային-կրոնական նկարագրի շատ շերտեր և դրանք փոխանցել սերունդներին:

Ռուբեն Մելքոնյան

«Հանրապետական», թիվ 3, 2007թ.

«ԾՊՏՅԱԼ» ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրապետական Թուրքիայի պատմության մեջ ժամանակ առ ժամանակ հանդես է եկել և երբեմն մեծ ծավալներ ընդգրկել այսպես կոչված «ավազակների և ավազակության» խնդիրը: Ավազակները կամ թուրքերենով՝ «էշքիյաներ» կոչվածները մարդիկ էին, որոնք սոցիալական կամ այլ բնույթի անարդարությունից դրդված՝ բարձրացել են լեռները և զբաղվել ավազակությամբ ու դրանով փորձել տեր կանգնել ոչ միայն իրենց, այլև հասարակ ժողովրդի օրինական շահերին: «Բարի ավազակները», ի տարբերություն թալանչի-ոճրագործների, հասարակության լայն շերտերի մեջ ընդունվել են որպես հասարակ ժողովրդի շահերի պաշտպաններ, սոցիալական կեղեքումների դեմ պայքարող մարտիկներ: Ժողովուրդն էլ, բնականաբար, ավազակների այս «ռոբին-հուդյան» տեսակին ցույց է տվել իր աջակցությունն ու դրական վերաբերմունքը և հարկ եղած դեպքերում օժանդակել նրան:

Թուրքական մի շարք աղբյուրներ ներկայացնում են փաստեր, որոնք վերաբերում են հանրապետական Թուրքիայում գործունեություն ծավալած հայ «ավազակների» և «ծպտյալ» կամ իսլամացած հայ բնակչության փոխհարաբերություններին: Ինչպես ստորև կտեսնենք, նրանք երբեմն, թերևս, ոչ պատահական զուգադիպությամբ, գործել են «ծպտյալ» հայերով բնակեցված տարածքներում՝ ամեն կերպ փորձելով կապեր հաստատել նրանց հետ, օգնել, սատարել, որպեսզի վերջինները հնարավորինս չհեռանան իրենց ազգային ակունքներից և նույնիսկ հաճախ կոչ են արել բացահայտել իրենց բուն էթնիկ պատկանելիությունը:

Մի շարք թուրք հետազոտողներ, անդրադառնալով վերը նշված խնդրին, ուշադրությունը սևեռում են հետևյալ հարցի պարզաբանման վրա՝ հայերը ինչի՞ց դրդված են դիմում նման գործողությունների և անդամակցում ծայրահեղական խմբավորումների: Ըստ նրանց բնորոշման և բառապաշարի՝ այդ «ահաբեկիչ, անջատողական, պառակտիչ գործողություններ անող» «ծպտյալ» հայերը շատ հաճախ առաջնորդվում են վրեժխնդրության զգացումի թելադրանքով, որի պատճառը, թուրքական ձևակերպմամբ «1915 թվականի հայերի տեղահանությունն է»: Այս կարծիքն ապացուցելու է գալիս այն փաստը, որ ծայրահեղական կազմակերպությունների ձերբակալված որոշ անդամների մոտ հայտնաբերվել են նաև պաստառներ, որոնց վրա գրված է եղել հետևյալ արտահայտությունը. «Հայոց Ցեղասպանության պատասխանը տալու եք»:

Թուրքական աղբյուրներում ներկայացվում են նաև ծայրահեղական խմբավորումների անդամ որոշ հայերի տվյալներ, որոնցից որպես նմուշներ մեջբերենք մի քանիսը.

1. Կարպիս Ալբընօղլի անունով մի հայ, օրինակ, նշվում է որպես ծայրահեղական կազմակերպություններից մեկի տեսաբան: Հետաքրքիր է, որ նա կրոնադարձված «ծպտյալ» հայի ժառանգ է, հայրը՝ Օհաննես Ալբընօղլին, ըստ թուրքական աղբյուրների, աքսորի երեխաներից է, այսինքն՝ ցեղասպանության ժամանակ որբ մնացածներից, և 1957թ., դիմելով Ամասիայի քաղաքացիական հարցերով 1-ին ատյանի դատարան վերընդունել է քրիստոնեություն, իսկ մայրը, նույնպես ամասիացի, 1921թ. ծնված հայ-քրիստոնյա է, անունը՝ Մարիամ:

2. Ադըյաման նահանգի Գերգեր գավառում գրանցված, իսլամացած, սակայն ծագումով հայ, Սաղըք Բաքըրջըօղլուն (նշված է նաև նրա հայկական տոհմածառը) 1996թ. կրոնադարձվել է, վերընդունել քրիստոնեություն, իսկ 1998թ. նույն քայլին է գնացել նաև նրա եղբայր Շեֆիք Բաքըրջըօղլուն:

3. Մանվել Դեմիր, ծնվել է 1963թ. Կեսարիայի նահանգի Բունյան գավառի Չիղի գյուղում, ընտանիքը ճարահատյալ գաղթել է Ստամբուլ՝ իրենց գյուղի վրա կատարված հարձակումների պատճառով: Մանվելն ավարտել է Ստամբուլի Սկյութարի Սուրբ Խաչ վարժարանը: Գործել է «Օմեր» ծածկանունով և զոհվել 1988թ. հունվարի 24-ին:

Իր կյանքով և գործունեությամբ հատկապես հետաքրքիր է հայ «ավազակ» Օրհան Բաքըրը (իսկական անունն է Արմենակ Բաքըրջյան, ծնվել է 1953թ., Դիարբեքիրում): Ստամբուլի համալսարանում սովորելուն զուգընթաց նա իր ընկերոջ՝ «Ակոս» թերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հետ աշխատել է հայկական Սուրբ Խաչ վարժարանում՝ որպես դասուսույց, և հենց այդ տարիներին էլ նրանք ակտիվորեն զբաղվել ու հետաքրքրվել են Թուրքիայի արևելյան և հարավ-արևելյան շրջաններում ապրող քրդախոս, իսլամացած հայերի խնդրով: Ավելին, ինչպես հետագայում խոստովանել է Դինքը, նրանք բազմիցս այցելել են այդ տարածքները, հավաքել քրդացած հայ մանուկներին և բերել Սկյութարի Սուրբ Խաչ վարժարանում հայկական կրթություն տալու:[1] Այս աշխատանքներում նրանց մեծապես աջակցել է դիարբեքիրցի քահանա տեր Գրիգոսը (ըստ երևույթին՝ Կիրակոս կամ Գրիգորիս), որը քաջատեղյակ լինելով ամբողջ արևելյան և հարավ-արևելյան շրջաններին և շրջելով այդ վայրերով՝ ձգտել է գտնել 1915-ից հետո ցաքուցրիվ մնացած հայերին: Հիշյալ գործում իր օգնությունն է ցուցաբերել նաև ժամանակի Կ. Պոլսո Հայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյանը:

Օրհան Բաքըրը և իր համախոհ ընկերներն այդ տարիներին անդամակցել են ծայրահեղ ձախակողմյան խմբավորումներից մեկին և դրա համար թաքցրել են նաև իրենց հայկական անձնանունները: Որոշ ժամանակ անց Արմենակը որոշում է «բարձրանալ լեռները», այսինքն՝

---

[1] *Ավելորդ չէ նշել, որ Հրանտ Դինքի կինը՝ Ռաքելը, նույնպես քրդացած էրմենի վարքո աշիրեթից է:*

դառնալ «ավազակ», և հետաքրքրական է, որ նա արդեն «Ալի աղա» կեղծանունով (կոդային անունով) հիմնականում գործել է Թունջելի-Էլյազիգ-Երզնկա շրջաններում և, ինչպես նշում են թուրքական աղբյուրները՝ կարողացել է կապ հաստատել նաև տեղի «ծպտյալ» հայերի հետ: Ինչպես հայտնի է, Հայոց Ցեղասպանության տարիներին շատ հայեր ապաստան են գտել Դերսիմի քուրդ-ալևիների, զազաների մոտ:[1] Օրհան Բաքըրի և Դերսիմի «ծպտյալ» հայերի կապերին է անդրադառնում «Ակոս» շաբաթաթերթում (27.05.2005) Ազատ Դեմիր ստորագրությամբ հոդվածագիրը, որն իր հոր և Օրհան Բաքըրի շփումների արդյունքում պարզել է, որ իրենք ևս ծագումով հայ են, ինչպես նաև տեղեկացել է, թե ովքեր են «գաղտնի քրիստոնյա» և «գաղտնի հայ» կոչվածները: Ազատ Դեմիրի հուշերում ևս խոսվում է, որ պետության կողմից «ավազակ, ահաբեկիչ» համարվող մարդկանց հասարակ ժողովուրդը և մասնավորապես իրենց համագյուղացիները դրական էին վերաբերվում, լավ ընդունում և նրանց ընկալում իբրև «հեղափոխականներ»: Նա պատմում է, որ «ավազակների» խմբի ղեկավար Օրհան Բաքըրին իր հայրն առանձնահատուկ պատվի և ուշադրության է արժանացրել, իսկ երբ նրանք երկուսով առանձին են եղել, խոսել ու այնուհետև արցունքոտ աչքերով երգել են իրեն անծանոթ մի լեզվով, որն ինչպես պարզվել է հետագայում՝ հայերենն է եղել: Օրհան Բաքըրը և միգուցե այլ հայ «ավազակներ» սերտ կապերի մեջ են եղել տեղի «ծպտյալ» հայերի հետ, պարբերաբար հանդիպել նրանց, փորձել նպաստել, որ նրանք իսպառ չկորցնեն ազգային նկարագիրը:

Հատկապես հետաքրքիր և դրամատիկ զարգացումներով հագեցած են Օրհան Բաքըրի և Էլյազիգի մզկիթի իմամի հարաբերությունները: Պարզվում է, որ այդ իմամը իրականում նույնպես «ծպտյալ» հայ է. նրա ամբողջ ընտանիքը զոհ է գնացել ցեղասպանության տարիներին, և ինքն էլ, վիրավոր վիճակում, մի կերպ է փրկվել: Սակայն ամենահետաքրքրականը և սահմռկեցուցիչն այն է, որ այդ իմամը իրականում հայ քահանա է, որը ցերեկները մզկիթում հանդես է գալիս որպես իմամ, իսկ գիշերներն իր տան նկուղում կառուցած գաղտնի եկեղեցում քահանայություն է անում (ի դեպ, ավելորդ չէ նշել, որ այսպիսի իմամ-քահանաների գոյության մասին հանդիպում ենք նաև այլ աղբյուրներում): Ծպտյալ քահանան և Օրհան Բաքըրը հանդիպում են հենց այդ

[1] *Այստեղ ապաստանած հայերի մասին տարբեր աղբյուրներ նշում են տարբեր թվեր՝ 20 հազարից մինչև 40 հազար: Սրանց մի մասը տարիների ընթացքում ձուլվել է քրդերի հետ և մեծապես կորցրել ազգային դիմագիծը, սակայն որոշ մասի մոտ դեռևս պահպանվում են ազգային-կրոնական նկարագրի որոշ նշույլներ: Հայտնի է, որ զազաները հարգանքով են վերաբերվում հայկական քրիստոնեական սրբավայրերին, նրանց խոսվածքում երբեմն հանդիպում են կիսաաղավաղված հայերեն բառեր և այլն:*

ընդհատակյա նկուղային եկեղեցում, զրուցում և բանավիճում տարբեր հարցերի շուրջ: Օրհանը ցանկություն է հայտնում, որ նա վերադառնա իր իրական ինքնությանը և չթաքցնի իր ծագումը, սակայն ծպտյալ քահանան այդ առաջարկին համաձայն չի լինում: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ Օրհան Բաքըրը շարունակել է դեռևս ուսանելու տարիներին սկսած գործունեությունը, այն է՝ վերադարձնել հայոց մնացորդացին իրենց ազգային ակունքներին:

Օրհան Բաքըրը տարիներ շարունակ հետապնդման մեջ է եղել և 1980թ. մայիսի 13-ին Էլյազիգի նահանգի Քարաքոչան գավառում, ընկնելով ծուղակի մեջ, զոհվել է: Օրհանի մահից հետո իր ընկերները գաղտնի փախցրել են նրա աճյունը և, իր իսկ կտակի համաձայն, թաղել Ֆարաչ լեռներում: Նրա հուղարկավորությունը վերածվել է մեծ արարողության, որին, ըստ վերոնշյալ հոդվածում տեղ գտած փաստերի, մասնակցել են հազարավոր մարդիկ, ենթադրաբար նաև մեծ թվով «ծպտյալ» հայեր:[1]

Այսպիսով, թուրքական աղբյուրների վերը բերված փաստերն ի հայտ են բերում «ծպտյալ» հայերի հետ կապված նոր իրողություններ ու ծալքեր, որոնք վկայությունն են այն բանի, որ մեր ապրող արյան մեջ մշտարթուն են Մեծ Եղեռնի հասցրած ցավն ու արդար հատուցման տենչը: Ի դեպ, վերջին տարիներին Թուրքիայում հրատարակվող գրքերը, հոդվածները, ուսումնասիրությունները ներկայացնելով իսլամ ընդունելու միջոցով «փրկված» հայերին, ինչպես և սպասելի էր, սկսել են արտահայտել այն միտքը, թե այդ բոլորն անառարկելի ապացույցներ են, որ 1915թ. դեպքերը ցեղասպանություն չի կարելի որակել, քանի որ ոչ բոլոր հայերն են կոտորվել: Սակայն, ակնհայտորեն, թուրք հեղինակներն անտեսում են այդ «ծպտյալ» և իսլամացած հայերի ի հայտ գալու պատճառները՝ միտումնավոր խոսք չբացելով այն մասին, որ ֆիզիկական «փրկությունը» իրագործվել է ազգային և կրոնական նկարագրի խեղման գնով:

Թուրքական քարոզչամեքենան ի չարն է օգտագործում նաև ծայրահեղական խմբավորումներում ծագումով հայերի ընդգրկման փաստը և ամեն կերպ ուշադրություն հրավիրելով այդ հանգամանքի վրա՝ փորձում է ցույց տալ, որ հայերն իրենց բնույթով ահաբեկիչ են և ապստամբ: Այս նուրբ թեմայի մասին խոսելիս, կարծում ենք, պետք է շրջահայաց լինել և ուշադրություն դարձնել վերն ասվածի վրա, համոզիչ ապացույցներով իրազեկել, որ ծայրահեղական խմբավորումների շատ թվով հայեր արդարացի վրիժառուի կամ «բարի ավազակի» նկարագիր ու էություն ունեն, և դրա վառ ապացույցն են նրանց ու հասարակ ժո-

[1] *Նշենք նաև, որ Օրհան Բաքըրի և այլ հայ «ավազակների» կյանքը և գործունեությունը դարձել են գրականության հետաքրքրության առարկա, և Մուրադ Քահրաման անունով մի հեղինակ գրել է «Ճիչ» վերնագրով գիրք նրանց մասին:*

ղովրդի փոխադարձ ջերմ հարաբերությունները: Բացի այդ, վերոնշյալ հայերի խնդիրը քննելիս չպետք է անտեսել նաև հոգեբանական կողմը և այն, որ շատ հայ «ավազակներ» գործել են հատկապես «ծպտյալ» հայերով բնակեցված տարածքներում: Ձախակողմյան, այն էլ ծայրահեղ ձախակողմյան խմբավորումների անդամ հայ «ավազակները» փորձել են ծպտյալ հայերի շրջանում աշխատանքներ իրականացնել, որպեսզի նրանք վերադառնան իրենց արմատներին կամ ամուր պահեն դրանք, և միգուցե դա տվել է նաև որոշակի արդյունք: Այս ամենը մեզ թույլ է տալիս նաև ինչ-որ տեղ նրանց համարել «ազգապահպան վրիժառուներ»: Եվ եթե չլինեին թուրքական տիրապետության հենց սկզբից ի վեր իրագործվող ազգային-կրոնական բռնաճնշումները, եթե չլիներ Հայոց Ցեղասպանությունը, մարդիկ ստիպված չէին լինի դառնալ «ծպտյալ», վրիժառու և «բարի ավազակներ»....

Ռուբեն Մելքոնյան

«Հանրապետական», թիվ 4, 2007թ.

Քայել Մարգարոզլու.

«ԿԱՆ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐ, ՀԱՏԿԱՊԵՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԵՋ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԲԱՑԱՀԱՅՏ ՀԱՅ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ»

(Ստամբուլում բնակվող համշենցի Քայել Մարգարոզլուի հարցազրույցը հատուկ «Հանրապետական» ամսագրի համար)

– Ի՞նչ կարող ես ասել ներկայիս Թուրքիայում ապրող համշենահայերի քանակի մասին:

– Թուրքիայում ներկայումս մոտավորապես 50000 համշենցի է ապրում: Համշենցիների մի մասն ապրում է Սև ծովի արևելյան ափերին, մի մասը Ադափազարի շրջանում, համշենցիներ կան նաև Թուրքիայի խոշոր քաղաքներում՝ Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում:

– Ինչպիսի՞ն է լեզվի վիճակը, պահպանվե՞լ է արդյոք Համշենի բարբառը:

– Երևի գիտեք, որ համշեներենը[1] ներկայումս միայն Հոփայի խմբի համշենցիների մոտ է պահպանվել, մյուս խումբը՝ չամլըհեմշինցիները, իրենց լեզվում պահպանել են որոշ բառեր, անձնանուններ, տեղանուններ, ինչպես նաև մշակութային տարրեր: Մենք՝ Հոփայի խմբի համշենցիներս, նախկինում թուրքերեն իրականում սովորում էինք միայն դպրոցում, իսկ տանը գերազանցապես համշեներենն էր օգտագործվում: Հիմա էլ վիճակն ընդհանուր առմամբ այդպես է, բայց վերջին տարիներին, այնուամենայնիվ, որոշ փոփոխություններ նկատվում են: Այսպես, որպեսզի երեխաները դպրոցում շատ հետ չընկնեն, հիմա սկսել են նաև տանը նրանց հետ ավելի շատ թուրքերեն խոսել և, օրինակ, ներկայիս երեխաներն իմ սերնդի չափ համշեներեն չգիտեն: Բացի այդ, թուրքական հեռուստաալիքները, ֆիլմերը ևս նպաստում են թուրքերենի ավելի շատ օգտագործմանը: Բայց ներկայումս էլ ավագ սերնդից մարդիկ կան, որոնք գրեթե չեն կիրառում թուրքերենը, դա կապված է նաև նրանց կյանքի ներփակ բնույթի հետ, իսկ երիտասարդների մոտ, որոնք սովորում են համալսարաններում կամ աշխատում են մեծ քաղաքներում, վիճակն այլ է: Վերջերս նկատվում է մեկ այլ միտում ևս. նրանք, ովքեր իրենց էթնիկ պատկանելության մասին իմանում են, անպայման ջանում են սովորել և կիրառել համշեներեն, ավելին՝ այն սովորեցնել իրենց երեխաներին:

– Համշենցիների մյուս խումբը՝ արևմտյանը, ինչպե՞ս է, որ չի պահպանել իր մայրենին՝ ի տարբերություն Հոփայի խմբի:

– Իմ ենթադրությամբ՝ դա կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ Հոփայի խումբն ավելի շատ բնակվում է գյուղերում,

[1] *Տեքստում միտումնավոր թողել ենք «համշեներեն» եզրը, քանի որ այդպես էր օգտագործում մեր զրուցակիցը (Ռ. Մ.):*

քաղաքների հետ շատ առնչություն չունի, այսինքն՝ ավելի ներփակ է ապրում, և միայն վերջին 20 տարիներին է, որ սկսել է հարաբերվել դրսի աշխարհի հետ: Կյանքի այս ներփակ բնույթը, ներքին ամուսնությունները և այլն նպաստել են լեզվի պահպանմանը: Մյուս ենթադրությունս այն է, որ մեր խումբն ավելի ուշ է մուսուլմանություն ընդունել, իսկ արևմտյանը՝ ավելի վաղ, և լեզվի կորուստը միգուցե նաև դրա հետ կարելի է կապել:

– Ինչպիսի՞ն են հարաբերությունները երկու խմբերի միջև:

– Լավ են, սակայն մի բան ասեմ. երբ համշենցիների հայ լինելու մասին քննարկումներ կամ վեճեր են սկսվում, արևմտյան համշենցիներն ասում են. «Ոչ թե մենք, այլ Հոփայի համշենցիներն են հայ»:

– Ինչպիսի՞ն է կրոնի դերը համշենցիների մոտ:

– Հայտնի է, որ Թուրքիայի համշենցիները մուսուլման են, բայց իսլամը շատերիս համար մեծ կարևորություն չունի, կրոնն ավելի շատ ֆոն է, այն մեր առօրյա կյանքի վրա շատ մեծ ազդեցություն չունի, շատ կրոնասեր չենք: Նշեմ, որ համշենցիները չեն հետևում իսլամի որոշ սկզբունքների, օրինակ՝ խմում են ալկոհոլային խմիչքներ, խոզի միս ուտում, մզկիթ հաճախ չեն գնում: Համշենցիները քրիստոնյա եղած ժամանակ էլ շատ կրոնամոլ չեն եղել: Ավելացնեմ նաև, որ Համշենում մզկիթներ սկսել են կառուցել առավելապես վերջին երկու տասնամյակում: Սակայն կարծում եմ, որ համշենցիների կրոնի մեջ և առօրյա կյանքում քրիստոնեության որոշ տարրեր, այնուամենայնիվ, մինչև հիմա էլ կան:

– Այո, հայտնի է, որ քրիստոնեության և նախաքրիստոնեական հայկական հավատքի որոշ տարրեր կան համշենցիների մոտ, հենց միայն, օրինակ վարդավառը, տրընդեզը: Իսկ ուրիշ ի՞նչ այլ հետաքրքիր օրինակ կարող ես նշել:

– Օրինակ, հարսանիքից հետո տուն մտնելիս փեսան դռան վերևը դանակով խաչ է գծում, ավելի ճիշտ, ոչ թե խաչ, այլ խաչը խորհրդանշող չորս խազ է անում:

– Իսկ ինչպիսի՞ն է ազգային ինքնագիտակցության խնդիրը համշենցիների մոտ:

– Երիտասարդները և կրթված, գրագետ մարդիկ ինքնության խնդիրը գիտեն, տեղյակ են, մեծահասակների մի մասն այդ փաստը չի ընդունում, սակայն սա կարող է պայմանավորված լինել նաև անտեղյակությամբ: Նշեմ, որ հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ հայաստանցի հայերը սկսեցին Վրաստանի տարածքով Թուրքիա գալ-գնալ, և երբ համշենցիները սկսեցին շփվել, խոսել՝ տեսան, որ լեզուն նույնն է, նրանց մոտ ինչ-որ բան փոխվեց, ինչ-որ բան սկսեցին հասկանալ: Սակայն կան համշենցիներ, հատկապես երիտասարդների մեջ, որոնք իրենց բացահայտ հայ են համարում:

– Իսկ իրական էթնիկ պատկանելությունը մերժելու գործում արդյոք դեր չունի՞ Թուրքիայում ձևավորված վախի մթնոլորտը:

– Ես կարծում եմ, որ դա ոչ թե այժմյան վախի մթնոլորտի, այլ ավելի շատ անցյալի, այսինքն՝ ենթագիտակցական մի վախի ազդեցության արդյունք է: Կան համշենցիներ, որոնք, իմանալով հանդերձ իրենց իրական էթնիկ պատկանելությունը, աշխատում են այդ մասին շատ չխոսել՝ խուսափելու համար ավելորդ բարդություններից: Օրինակ՝ թուրքի հետ առևտրով զբաղվող կամ համատեղ բիզնես ունեցող մարդուն դա կարող է և վնաս պատճառել, այսինքն՝ ինքնությունը թաքցնելու ուղղակի ճնշումներ չկան, բայց այսպիսի անուղղակի ճնշումներ հնարավոր է լինեն: Մի խումբ համշենցիներ էլ մտածում են, որ միևնույն է՝ այսքան դարեր են անցել, իրենք փոխվել են, հիմա վեր կենան, ասեն հայ են, ի՞նչ պիտի փոխվի:

– Ամուսնության խնդիրը ինչպե՞ս է համշենցիների մոտ, պահպանվո՞ւմ է արդյոք ներքին ամուսնությունների ավանդույթը, թե՞ դա արդեն խախտվել է:

– Ներկայումս էլ շատ են ներքին ամուսնությունները, նախկինում ընդհանրապես դրսից ոչ մեկի հետ չէին ամուսնանում: Սակայն վերջին տարիներին վիճակը մի փոքր փոխվել է, հատկապես մեծ քաղաքներում ապրող երիտասարդներն ամուսնանում են թուրքերի, քրդերի, մի խոսքով՝ օտարների հետ, սակայն Համշենում այդպես չէ և ամուսնանում են գերազանցապես համշենցիների հետ. օրինակ՝ իմ եղբայրը, որ ապրում է Համշենում, ամուսնացել է համշենցու հետ, իսկ Ստամբուլում ապրող քույրս՝ քրդի հետ:

– Իսկ Թուրքիայի հայերի հետ ամուսնանո՞ւմ են:

– Գիտես, մենք Թուրքիայի հայերին նախկինում շատ չէինք ճանաչում, շփվում, նոր-նոր է, որ սկսում ենք իրար ճանաչել: Նրանք էլ են սկսել հետաքրքրվել համշենցիներով, Համշենով, գալիս են, գնում: Ամուսնության խնդրին գալով՝ ասեմ, որ կարող է համշենցին ամուսնանալ ստամբուլահայի հետ, սակայն ինչ պետք է լինի հետո, երբ երեխա ծնվի, այդ երեխան եկեղեցում պետք է կնքվի, թե ոչ, այսինքն՝ սա կախված է կոնկրետ անձերից և կրոնի հանդեպ ունեցած նրանց անձնական վերաբերմունքից:

– Համշենցիներն ի՞նչ են մտածում Հայաստանի մասին, այն համարո՞ւմ են արդյոք նախկին հայրենիք կամ բնօրան:

– Ոչ, նման բան չկա, սակայն շատ են ցանկանում գալ, տեսնել, որովհետև հետաքրքրվում են լեզվով և միգուցե, եթե ինքնության մասին կասկածներ ունեն, նաև դա փարատելու համար: Սակայն եթե անկեղծ ես ուզում իմանալ, ապա Հայաստանը որպես նախկին հայրենիք չեն ընդունում, այդպիսի բան չկա, իրենց հայրենիքը նրանք համարում են սևծովյան ափերը, որովհետև իրենց հայրերը, պապերը այդտեղ են ծնվել, այդտեղ ապրել:

– Սակայն մինչև սևծովյան ափերը գալը որտե՞ղ են ապրել, խոսքս դրա մասին է:

– Բայց քո նշած դեպքից ինչքա՞ն է անցել, շուրջ 1200 տարի, համշենցիներն իրենք իրենց արդեն այս սևծովյան մշակույթի կրողներ են համարում և ոչ՝ հայաստանյան:

– Իսկ ի՞նչ են մտածում համշենցիները Հրանտ Դինքի սպանության մասին:

– Հրանտը խիզախ խոսող մարդ էր և այնպիսի բաներ էր ասում, որ շատերը կվախենային դա ասել: Նա ասում էր, որ մինչ 1915-ը այստեղ ապրող 1.500.000 հայերը չկան, ի՞նչ եղան, ո՞ւր են: Հայտնի է, որ թուրքական պետությունը ժողովրդից շատ բաներ, ներառյալ և այս հարցը, փակ է պահում և հրամցնում միայն պաշտոնական տեսակետները, և ահա Դինքը նպաստեց, որ այս հարցն ավելի մասսայական քննարկվի, ու շատ բաներ սկսեցին ի հայտ գալ, շատերի համար մինչ այդ անհայտ բաներ պարզվեցին: Եթե դեպքերն այս հունով զարգանան, չի բացառվում, որ մի օր մեծ թվով մարդիկ իրենց մեջ ուժ կգտնեն ասելու, որ 1915-ին տեղի ունեցածների համար պետք է ներողություն խնդրել: Դինքի սպանությամբ փորձ արվեց նաև հարված հասցնել այս տենդենցին, բայց տեսա՞ք, թե ինչ եղավ նրա մահից հետո, երբ 100.000 մարդ դուրս եկավ փողոց: Սպանության գիշերն առաջինը հազարավոր ձախակողմյաններ դուրս եկան փողոց, և նրանք հայեր չէին: Ես քեզ ասեմ, որ Թուրքիայի հայերի մեծ մասը զգուշավոր է: Նրանք միշտ ասում են՝ չխոսենք, չասենք, որ հայ ենք, մարդ չլսի, չիմանա, այսինքն՝ փոքրամասնության հոգեբանությունը միշտ ուղեկցում է նրանց:

– Այո, նման վարքագծի ես անձամբ եմ ականատես եղել Ստամբուլում, երբ ինձ ուղեկցող ստամբուլահայը հասարակական վայրերում առաջարկում էր չխոսել հայերեն, որ կողքից հանկարծ չլսեն, չիմանան, որ հայ ենք:

– Դա սխալ պահվածք է: Օրինակ, մի դեպք պատմեմ ինձ հետ կապված: Մի երկու տարի առաջ իմ թուրք գործընկերը, ում հետ այդ ժամանակ աշխատում էի, շատ գոհ լինելով ինձնից՝ հարցրեց, թե որտեղի՞ց եմ: Ես էլ ասացի համշենցի եմ, հարցրեց՝ համշենցիները ովքե՞ր են, լա՞զ են, պատասխանեցի, որ նախկին հայեր են, նա էլ զարմացած ասաց. «Անհնար է, դու չես կարող հայ լինել, որովհետև դու շատ լավ մարդ ես»: Ես էլ նրան զայրացած հարցրի. «Դու այդ քանի՞ հայ ես ճանաչում, որ նման կարծիքի ես»: Նա էլ պատասխանեց. «Ոչ մի, ես գրքերում եմ դա կարդացել»: Մեր այս զրույցից հետո նրա մոտ ինչ-որ բան փոխվեց, երևի զգաց, որ սխալ էր մտածում: Այսինքն, չխոսելը սխալ է: Ահա, Դինքն այս պատկերացումները և մտածելակերպը կոտրեց: Նրա սպանության երեկոյան ձախերը սկսեցին հավաքվել և այն էլ բավական մեծ թվով, այնուհետև հայերն էլ սկսեցին միանալ: Թուրքիայի տարբեր վայրերում բողոքի ակցիաներ եղան՝ Անկարայում, Իզմիրում, այլուր:

– Իսկ Համշենում Դինքի սպանության հետ կապված ինչ-որ միջոցառում եղա՞վ:

– Համշենում բողոքի ակցիա չեղավ, բայց շատ համշենցիների եմ ես տեսել թաղման արարողությանը և Ստամբուլի բողոքի ցույցի ժամանակ, որին անձամբ մասնակցում էի: Մարդիկ կային, որոնք եկել էին Համշենից հատուկ դրան մասնակցելու համար: Ավելին ասեմ. սպանության գիշերը և հաջորդ օրերին բողոքի ակցիայի հիմնական կազմակերպիչներից երեքը համշենցիներ էին: Նշեմ նաև, որ համշենցիներն ընդհանրապես քաղաքականացված մարդիկ են, դեմ՝ ամեն տեսակի անարդարության, և նրանց մեծ մասն ընդդիմադիր է:

– Հայտնի է նաև, որ որոշ համշենցիներ զբաղեցրել են բարձր պաշտոններ Թուրքիայի Հանրապետությունում, օրինակ՝ նախկին վարչապետ Մեսութ Յըլմազը, Մուրադ Քարայալչընը և այլն:

– Այո, կան պաշտոնյաներ, բայց, օրինակ, բարձրաստիճան զինվորականների մեջ համշենցիներ չկան:

– Ինչի՞ հետ է սա կապված:

– Հայտնի է, որ զինվորական համակարգ մտնել ցանկացողի կենսագրությունը մանրակրիտ ուսումնասիրվում է:

– Այսինքն՝ ուզում ես ասել, որ այդ մանրակրկիտ ուսումնասիրությունները պարզում են, որ համշենցիներն ունեն հայկական ծագում և այդ պատճառով չեն ընդունվում զինվորական համակարգ:

– Այո:

– Եվ վերջում. ի՞նչ ես մտածում հայաստանցի հայերի և համշենահայերի հարաբերությունների մասին:

– Ես կարծում եմ, որ պետք է սերտացնել մշակութային կապերը, միգուցե ընդհանուր ծրագրեր կազմակերպել: Օրինակ, հայկական մշակույթը, բանահյուսական նյութերը, լեզուն մեծ ազդեցություն են ունենում համշենցիների վրա՝ կապված նաև քո նշած ազգային ինքնագիտակցության հետ: Այդ ամենը՝ ժողովրդական երգերը, տոները, լեզուն և այլն, պարզորոշ ցույց են տալիս հայերի և համշենցիների նմանությունը, ընդհանրությունը...

Զրույցը վարեց
Ռուբեն Մելքոնյանը
«Հանրապետական», թիվ 7, 2007թ.

ԱՐԱԲԱՑԱԾ ՀԱՅԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Այլադավան և ծպտյալ հայերի թեմայի ուսումնասիրությունն ի հայտ է բերում մինչ օրս շատ քիչ հայտնի և միևնույն ժամանակ հետաքրքիր մանրամասներ: Հանրահայտ փաստ է, որ Հայոց Ցեղասպանության ժամանակ որոշ հայեր ընդունել են իսլամ՝ կոտորածից և աքսորից փրկվելու համար, և ներկայումս Թուրքիայում կան քրդացած, թուրքացած հայեր, որոնց մի մասն իրեն արտաքուստ է միայն այդպես ներկայացնում: Սակայն ծպտյալ և իսլամացած հայերի թեմայի շրջանակներում գրեթե չի լուսաբանվել և շատերի համար անհայտ է այն իրողությունը, որ ներկայիս Թուրքիայում ապրում են նաև հազարավոր արաբացած հայեր:

Թուրք պատմաբան Սալիմ Ջյոհջեն արծագանքելով Թուրքական պատմական ընկերության նախագահ Հալաչօղլուի՝ այլադավան հայերի թեմայի շուրջ բարձրացրած աղմուկին, «Աքսիոն» հանդեսի 664-րդ համարում տպագրված հարցազրույցում ասել է. «Յուսուֆ Հալաչօղլուի ասածները ճիշտ են ու նորություն չեն», և նշելով թեմայի շրջանակներում արդեն նոր բացահայտումներ անելու անհրաժեշտության մասին՝ ավելացրել, որ հայերը ոչ միայն քրդացել կամ թուրքացել են, այլև արաբացել: «Սղերթում, Հաթայում (Ալեքսանդրետ), Ուրֆայում, Մարդինում բնակվող հայերն արաբացել են և այսօր արաբախոս են»,- հայտարարել է նա: Միևնույն ժամանակ, Ջյոհջեն նշում է, թե Թուրքիայում կան նաև ասորացած հայեր: Ակնհայտ է, որ Թուրքիայի պետական տարբեր օղակներ, վերլուծական, հետազոտական կենտրոններ զբաղված են ծպտյալ և իսլամացած հայերի մասին նոր տվյալներ ձեռք բերելու գործով: «Աքսիոն» հանդեսում հրատարակվել են այժմ Թուրքիայում ծպտյալ հայերի բնակության վայրերի, թվաքանակի մասին տվյալներ, ինչպես նաև նշվում է, թե նրանք պաշտոնապես որ ազգի կամ կրոնական համայնքի ներկայացուցիչներ են համարվում: Հետաքրքիր է, որ հենց թուրքական հանդեսի տեղեկության համաձայն՝ այդ տվյալներն անընդհատ փոփոխվում են, քանի որ աշխատանքները այժմ էլ շարունակվում են: Ստորև ներկայացվող ցուցակում, որը վերցված է «Աքսիոն» հանդեսից, հանդիպում են նաև տվյալներ, որոնք ցույց են տալիս, թե որ շրջաններում կան արաբացած հայեր:

Քաղաքը	*Ծպտյալ հայերի թիվը*	*«Պաշտոնական» կարգավիճակը*
Դիարբեքիր	1000 ընտանիք	քուրդ, ասորի, ալևի
Մալաթիա	3655 ընտանիք	քուրդ-ալևի
Կեսարիա	5000 ընտանիք	թուրք
Էյազիգ	1000 ընտանիք	քուրդ, ալևի
Վան	4000 ընտանիք	քուրդ
Թունջելի	2000 ընտանիք	քուրդ-ալևի

Շանլըուրֆա	3500 ընտանիք	քուրդ, արաբ
Սղերթ	1200 ընտանիք	արաբ, քուրդ
Հաթայ (Ալեքսանդրետ)	1100 ընտանիք	արաբ
Բիթլիս	200 ընտանիք	քուրդ
Էրզրում	3000 ընտանիք	քուրդ, ալևի, թուրք
Երզնկա	1300 ընտանիք	ալևի, քուրդ
Սեբաստիա	2000 ընտանիք	քուրդ, ալևի
Մարդին	1500 ընտանիք	արաբ
Քահրաման Մարաշ	3000 ընտանիք	քուրդ, ալևի
Աղբյաման	1600 ընտանիք	քուրդ
Ադանա	2000 ընտանիք	քուրդ, արաբ, ալևի

Փաստորեն, արաբացած հայերը բնակվում են Սղերթի, Հաթայի, Շանլըուրֆայի, Մարդինի և Ադանայի շրջաններում: Սակայն, հետաքրքիր է այն հարցը, թե ինչու պետք է հայերը, փրկելու համար իրենց կյանքը, իսլամ ընդունելուց հետո հանդես գային որպես արաբներ և ոչ քրդեր կամ թուրքեր: Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներին սահմանակից շրջաններում հայերի արաբանալը, թերևս, կարելի է պայմանավորել արաբների հետ սերտ շփումներով, ինչն էլ ստիպել է այդ տարածքների հայերին կոտորվելուց խուսափելու համար արաբանալ: Բայց խնդրի վերաբերյալ այլ հավաստի աղբյուրների և անձնական դիտարկումների արդյունքում ձեռք բերված փաստերը որոշակի հարցեր են առաջացնում: Օրինակ, արաբացած հայեր կան ոչ միայն նշված վայրերում, այլև որքան էլ զարմանալի է՝ Սասունի, Մուշի գյուղերում, և այս մասին թուրքական աղբյուրները լռում են: Ի տարբերություն այլ շրջանների, այս վայրերում «դյոնմե» (հավատափոխ) ասելով՝ նկատի են ունենում ոչ միայն քրդացած հայերին, այլև արաբացածներին: Տեղացիները շատ լավ են ճանաչում միմյանց, և գրեթե բոլորը գիտեն արաբացած և արաբախոս հայերի իրական էթնիկ պատկանելիության մասին, ինչպես նաև գիտեն, թե ովքեր են իրականում քրդացած հայեր, ովքեր՝ թուրքացած և այլն: Ի վերջո, հենց արաբացած հայերը չեն ժխտում իրենց հայկական ծագումը, թեպետ չի էլ կարելի ասել, թե շատ բացահայտ են դա ընդունում: Հետաքրքիր է, որ արաբացած հայերը բնակվում են նախկին հայկական գյուղերում, օրինակ՝ Սասունի Մճկեղ գյուղը ներկայումս արաբացած հայերով է բնակեցված, բացի այդ, նրանք գիտեն բոլոր հայկական եկեղեցիների, սրբավայրերի, գերեզմանատների տեղերը: Հենց արաբացած հայերի խոստովանությամբ իրենք այդ վայրերի բնիկների ժառանգներն են: Եթե սա հիմք ընդունենք ու հաշվի առնենք, որ դրանք նախկին հայկական գյուղեր են, ապա պարզ կդառնա, որ արաբացած հայերին կարելի է համարել այդ գյուղերի նախկին հայ բնակչության սերունդներ:

Բայց արաբացած հայերը Թուրքիայում ապրող այլ կրոնափոխ հայերի խմբերից՝ մասնավորապես քրդացածներից, ունեն էական տարբերություններ: Օրինակ, արաբացած հայերը, ի տարբերություն քրդացածների, վայելում են թուրքական պետության որոշակի վստահությունը: Այս հանգամանքը, կարծում ենք, կարող է օգնել՝ հասկանալու համար Թուրքիայում արաբացած հայերի գոյության հանելուկը: Արաբացած հայերն իրենց մի աստիճան բարձր են համարում քրդացած հայերից, քանի որ նրանք ոչ թե դեմ են թուրքական պետությանը, այլ ընդհակառակը՝ թուրքական պետությունը հովանավորում է իրենց: Ավելին, թուրքական պետությունն արաբացած հայերին տալիս է զենք, զինամթերք, նույնիսկ աշխատավարձ, որպեսզի նրանք պայքարեն PKK-ական քրդերի դեմ և պահեն իրենց գյուղերը: Գաղտնիք չէ, որ հենց նշյալ շրջաններում, ինչպես անցյալում, այնպես էլ հիմա, տեղի ունենում քրդական հուզումները: Գաղտնիք չէ նաև, որ արդեն տևական ժամանակ այդ վայրերում ընթանում է չհայտարարված պատերազմ քրդական զինյալների և թուրքական կանոնավոր բանակի միջև: Եվ ահա այս պատերազմում արաբացած հայերը թուրքական պետության կողմից դիտվում են որպես լրացուցիչ պատնեշ քրդերի դեմ:

Հայերի արաբանալը և հատկապես այդ վայրերում բնակվելը, մեր կարծիքով, կարելի է մեկնաբանել և բացատրել հետևյալով.

1. Հայերը ցեղասպանության տարիներին մտել են արաբական աշիրեթները, արաբացել, իսլամացել և արդեն որպես իսլամ արաբներ շարունակել ապրել իրենց գյուղերում: Վարկածն ունի հավանականության որոշակի տոկոս, սակայն առաջացնում է նաև որոշ հարցեր, մասնավորապես՝ օսմանյան կամ թուրքական կառավարությունները, տեղյակ լինելով սրան՝ ինչո՞ւ են թողել այդ ամենը:

2. Ցեղասպանության ժամանակ աքսորի ճամփով մի կերպ Դեր Զոր, Սիրիա հասած հայերը կամ նրանց երեխաները հետագայում ընդունելով իսլամ վերադարձել են Թուրքիա՝ իրենց նախնիների գյուղերը, բայց արդեն որպես արաբներ: Այս փաստարկի օգտին է խոսում մի քանի հանգամանք: Նախ, լիբանանահայերի և սիրիահայերի շրջանում անցկացրած մեր հարցումները ցույց են տվել, որ ցեղասպանությունից հետո այնտեղ ապաստանած հայերից եղել են մարդիկ, ովքեր վերադարձել են Թուրքիա: Փաստը, որ ցեղասպանության տարիներին արաբական որոշ ցեղերի մոտ եղել են որբ հայ երեխաներ, ապացուցում են մի շարք աղբյուրներ, այդ թվում և Կ. Պոլսո Հայոց Պատրիարքարանի 1921թ. կազմած մի տեղեկանք, որտեղ նշված է, թե արաբական որ ցեղերի մոտ ինչքան հայ որբեր են գտնվում: Ըստ այդ ցուցակի՝ Դեր Զորի շրջանի Զիբար, Էգաբար և Վարաքորա ցեղերի մոտ գտնվել են առնվազն 500, Ժիբուր (Զիբուր) ցեղի մոտ՝ 600, Շամոր (Շեմմար) ցեղի մոտ՝ 700, Անեզաի (Անեզա) ցեղի մոտ՝ 2000, Ռեսուլայնի շրջանի չեչենական ցեղերի մոտ՝ 2000 հայ որբ երեխաներ: Չի կարելի բացառել, որ այս երեխաները, ինչպես նաև փրկված այլ հայեր

հենց կազմել են արաբացած հայերի կորիզը: Այս ամենի վրա կարող է լույս սփռել նաև այն հանգամանքը, որ արաբացած հայերը Թուրքիա են վերադարձել հատկապես 1930-ականների վերջին և 40-ականների սկզբին, այն էլ՝ թուրքական պետության համաձայնությամբ, ավելին՝ աջակցությամբ: Սիրիահայերը կամ լիբանանահայերը, որոնց հետ մենք զրուցել ենք, խոստովանում են, որ իրոք իրենց բարեկամները կամ հարազատները ցեղասպանությունից որոշ ժամանակ անց վերադարձել են Արևմտյան Հայաստան: Այս վերադարձի ժամկետները շատ հաճախ համապատասխանում են 1930-ականների վերջերին: Այստեղ կարևոր է հաշվի առնել հետևյալ փաստը. այդ տարածքներում են տեղի ունեցել քրդական ապստամբություններն ու խռովությունները, և հենց Դերսիմում 1938թ. արյան մեջ ճնշվել է ալևիների ապստամբությունը: Դրան նախորդել են այլ ապստամբություններ և բախումներ: Այսինքն, շրջանը եղել է շարունակական ժողովրդական հուզումների վայր, և արաբացած հայերին բերելով ու բնակեցնելով այս վայրերում՝ Թուրքիան ստեղծել է հակակշիռ քրդերի դեմ:

Անշուշտ, հետաքրքիր է իմանալ նաև արաբացած հայերի մոտ հայկական ինքնագիտակցության պահպանման կամ դրա աստիճանի մասին, սակայն այդ ամենի վերաբերյալ տվյալները հակասական են և ոչ ստույգ: Ըստ մի վարկածի, եթե նրանց մեջ լիներ ցեղասպանության վրեժի գաղափար, ապա դժվար թե նրանք համագործակցեին թուրքական իշխանությունների հետ: Այստեղ պարզ կարելի է նկատել դարեր շարունակ թուրքական քաղաքականության հետքը, այն է՝ իրար դեմ լարել հարևանությամբ ապրող էթնոսներին և շահել, ինչը տեղի է ունեցել նաև այս պարագայում: Միաժամանակ, քրդերի դեմ արաբացած հայերի պայքարում կարելի է տեսնել հենց նույն վրեժի գաղափարը, քանի որ գաղտնիք չէ, և այժմ էլ քրդերն իրենք են խոստովանում, որ ցեղասպանության ժամանակ գործել են հայերի դեմ, կոտորել նրանց, թալանել, տիրացել ունեցվածքին և գյուղերին: Միգուցե թուրքական պետությունն օգտագործել է հենց այս հանգամանքը՝ արաբացած հայերին իրենց կողմը գրավելու և քրդերի դեմ օգտագործելու համար:

Չափազանց հետաքրքիր է քրդացած և արաբացած հայերի հարաբերությունների հարցը, որի մասին նույնպես չկան տվյալներ, բայց կարելի է արձանագրել, որ Թուրքիայում դավանափոխ հայերի երկու խմբեր կամա, թե ակամա հայտնվել են հակադիր ճամբարներում:

Ինչպես պարզորոշ ցույց են տալիս փաստերը, ծպտյալ հայերի թեման ունի շատ ենթաշերտեր, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է յուրովի մոտեցում, և կարծում ենք՝ հետևողական աշխատանքները լույս կսփռեն այս խնդրի վրա, որը մեզ համար ունի ոչ միայն քաղաքական, այլև բարոյական և հոգեբանական նշանակություն:

Ռուբեն Մելքոնյան

«Հանրապետական», թիվ 8, 2007թ.

ՀԱՅ ՄՈԼՈԿԱՆՆԵՐ

Տեղեկատվական քաղաքակրթության օրեցօր հզորացող մամլիչի ներքո ազգային խնդիրն ինքնության պահպանության համատեքստում օրակարգային նշանակություն է ձեռք բերում: Հետաքրքիր են հատկապես ուսումնասիրություններն ինքնության պահպանությանը նպաստող գործոնների դասակարգման տեսանկյունից, որտեղ, երբ խոսվում է հայ տեսակի մասին, անշուշտ, նշվում են նաև կրոնի դերի մասին պատկերացումները: Այս առումով չենք ցանկանում քննարկել, թե հայ հանրույթի համար կրոնի որ ձևն առավել նպաստավոր կլիներ ազգապահպանության տեսակետից: Կարծում ենք, որ խնդիրը տվյալ պարագայում առավել սուբյեկտիվ է՝ կապված ելակետերի նպատակային ընտրության հարցի հետ:

Ինչևէ, ասվածի համատեքստում անդրադառնանք մի փոքր հայկական կրոնական խմբի, որի գոյության մասին որոշ հատվածական ուսումնասիրություններ կատարվել են միայն Միացյալ Նահանգներում: Խոսքը հայ մոլոկանների մասին է:

Առաջին հայացքից թվում է, թե Ռուս Ուղղափառ եկեղեցուց անջատված, ռուսական էքսկլեկտ տարրին բնորոշ մոլոկանությունը[1] կոչվող հոսանքը որևէ ընդհանրություն չի կարող ունենալ հայ ինքնության հիմնախնդիրների հետ: Սակայն փաստերն այլ բան են ասում:

Ցարական կայսրության կրոնական քաղաքականության արդյունքում 1800-ականների սկզբից մոլոկանները վերաբնակվեցին Կովկասում՝ կայսրության հարավային սահմանի երկայնքով հիմք դնելով ռուսական գաղթօջախների: Նույն շրջանում էլ նրանցից շատերը բնակություն հաստատեցին Կարսի մարզում: 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ցարական իշխանությունը ստվարացրեց Կարսի

[1] *Մոլոկանների հիմնադիրն է համարվում տամբովցի Սիմոն Ուկլեինը: Աղանդի անվան ստուգաբանման հարցում գոյություն ունեն տարածայնություններ: Ոմանք «մոլոկան» անունը բխեցնում են Մոլոչնայա գետի անունից, երկրորդները համարում են, որ այդ անունը հերձվածը ստացել է պասի ժամանակ կաթ օգտագործելուց, հեղինակների երրորդ խումբը համարում է, որ անունն աղանդը ստացել է Աստվածաշնչում հիշատակված «հոգևոր կաթից»: 1768թ. Սիմոն Ուկլեինն իր «70 առաքյալներով» սկսեց աղանդի գործունեությունը, որը կարճ ժամանակում տարածվեց Սիբիրում, Կենտրոնական և Հարավային Ռուսաստանում, ինչպես նաև Անդրկովկասում: 19-րդ դարի 30-40-ական թվերին մոլոկանությունը բաժանվել է տարբեր ճյուղերի՝ ուկլեինականներ (հին մոլոկաններ), պրիգուն-մոլոկաններ և այլն: Հայաստանում մեծ է եղել պրիգունների քանակը, քանի որ հոսանքի հիմնադիր Մաքսիմ Ռուդոմյոտկինն ապրել և գործել է Հայաստանում:*

մարզում ռուսական տարբեր կրոնական խմբերի ներկայությունը, որոնցից էին մոլոկանները, դուխոբորները, շաբաթականները (սուբոտնիկներ), բապտիստները և այլն:

Կան փաստեր, որ այդ ժամանակ Կարսի շրջանի Կարա-կալա (նշանակում է Սև ամրոց) գյուղում հայ մոլոկաններ են ապրել: Հստակ տեղեկություններ, թե երբ են հայերը բնակվել Կարա-կալայում կամ թե երբ են ռուսներն իրենց ռազմական հենակետը կառուցել այս գյուղում, չունենք: Ամենահավաստի տեղեկատվությունը տվել է ժամանակակիցներից Սիրական Կալոյանն իր «Շիրակի հայերի ներգաղթն ԱՄՆ» գրքում: Նա գրում է, որ Կարա-կալան 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հիմնադրված արդիական գյուղ է, գեղեցիկ շինություններով և լայն փողոցներով: Նախքան Կարա-կալա տեղափոխվելը հայերը բնակվելիս են եղել Գեզեաչխլարում (առավել հստակ արտասանությունը և տեղադրությունը հայտնի չեն) և իրենց բողոքական հավատքի համար պարբերաբար հալածանքների են ենթարկվել համագյուղացիների կողմից: Այս մասին հետաքրքիր տեղեկություն է գրի առել Մ.Մուշեղյանը քահանա Փերումյանի պատմածներից՝ նշելով, որ այս գյուղի խուլիգանները հետապնդում, վիրավորում և հայհոյում էին բողոքականներին, պղծում նրանց դիակները՝ հանելով նորաթաղներին և ծառերից կախելով: Այդ պատճառով նրանք բողոք-նամակով դիմում են Նիկոլայ II-ին, որն էլ առաջարկում է նրանց տեղափոխվել ռուսական ռազմական հենակետի տարածք: Հարցի այդպիսի լուծման արդյունքում էլ հայ բողոքականները բնակվեցին Կարա-կալայում:

Ի դեպ, պահպանվել է բավական հեռվից արված մի լուսանկար, որտեղ գյուղացիները սև և սպիտակ շորերով կանգնած են իրենց բարաքների առջև: Տեսակետ կա, որ սպիտակ հագուստով մարդիկ հայ մոլոկաններն են, իսկ սև հագուստովը՝ այլազգի մոլոկանները: Այս լուսանկարն այսօր հանդիսանում է այն հիմքերից մեկը, որով գաղթած մոլոկանների սերունդները Թուրքիա այցելության ընթացքում ցանկանում են ճշգրտել գյուղի տեղանքը: Բանն այն է, որ գյուղի տեղանքը բլրապատ տարածք է, և այդ բլուրներն էլ այսօր հիմնական կողմնորոշիչն են հանդիսանում, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո գյուղում մնացած բնակչությունը վտարվեց, իսկ գյուղն ամբողջությամբ հավասարեցվեց հողին: Չնայած սրան շրջակայքի գյուղացիներն այսօր էլ պահպանում են հիշողությունն այն մասին, որ տվյալ տարածքում ոչ վաղ անցյալում գոյություն են ունեցել ռուսական ռազմական հենակետ և գյուղ: Այս առումով հետաքրքրական են հայ մոլոկանների սերունդներից Զոյա Քեոսաբաբյան-Բիվինի՝ Թուրքիայում կատարած ուսումնասիրությունները, որտեղ նա, սեփական գերդաստանի արմատները գտնելու ճանապարհին, պարզել է, որ Կարսը Թուրքիային հանձնելուց հետո հայ մոլոկանների որոշ մասը, ինքնապահպանության մղումից ելնելով, թուրքացրել է ազգանունները:

Այս ամենից բացի, Կարա-կալայի հետ կապված են նաև մի շարք հետաքրքրական ավանդազրույցներ: Ըստ դրանցից մեկի՝ 1855թ. տասնմեկամյա մի երեխա տեսիլք է ունենում, որտեղ նրան հայտնվում է, որ թուրքերը կազմակերպելու են հայերի կոտորածներ, և դրանից խույս տալու համար հայերը պետք է արտագաղթեն այդ տարածքից: Հետագայում այդ մարգարեությունը կրկնվում է 1900թ., որից հետո հայ և ռուս մոլոկաններն արտագաղթում են Կարսի մարզից: «Մարգարե» տղայի անունը Դեմոս Շաքարյան էր, որի ընտանիքն սկզբնական շրջանում բնակություն է հաստատում Նյու Յորքում, հետո՝ Լոս Անջելեսում: Այստեղ էլ Շաքարյան ընտանիքն ԱՄՆ-ում հայ մոլոկանների մեջ դառնում է ամենահայտնին՝ իր կուտակած ֆինանսական կարողությունների և համախմբող դերի շնորհիվ: Ահա թուրքական ջարդերից խուսափելու այսպիսի մարգարեական դիպվածով են հայ մոլոկաններից շատերը բացատրում իրենց արտագաղթը Կարա-կալայից, չնայած որ մինչ օրս նրանք պախարակվում են հայերին սպառնացող վտանգից խույս տալու, մյուսներին չզգուշացնելու և հայրենակիցներին դավաճանելու համար:

1900-ականների սկզբին (հատկապես 1905-12թթ. ընկած շրջանում) մոտ 3000 ռուս և հայ մոլոկաններ, զինվորական ծառայությունից խուսափելու և աշխատանք գտնելու հույսով, արտագաղթեցին ԱՄՆ: Լոս Անջելեսի արևելյան կողմում գտնվող «Ֆլեթս» թաղամասում, այլ մոլոկանների գյուղերի մոտակայքում, հայ մոլոկանները հիմք դրեցին իրենց եկեղեցուն՝ պահպանելով հայ ինքնությանը բնորոշ լեզվամշակութային տարրեր և մոլոկանության ծիսապաշտամունքը: Հետաքրքրական է, որ պատմական հիշողությունը նրանց մոտ թարմ է մնացել մինչ օրս, քանի որ նույնիսկ Լոս Անջելեսում բնակվելուց հետո նրանք իրենց բնակավայրը կոչում էին «Կարա-կալա» կամ «Կրիկ-կալա»:

1926թ. Կարսում և Արդահանում մնացած մոլոկաններից (հայ և ռուս) շատերին Ռոստովի «Սալսկի տափաստան» կոչվող վայրում ազատ հողատարածք առաջարկվեց խորհրդային իշխանությունների կողմից, ինչի հետևանքով էլ նրանց 90 տոկոսն (ինչպես նաև բոլոր ռուս դուխոբորները) արտագաղթեց Ռուսաստան: Ռոստովի շրջանում մոլոկանները և դուխոբորները վերաբնակեցվեցին մոտ 34 գյուղերում, որոնցից շատերն անվանվեցին իրենց թողած բնակավայրերի անունով:

1930-ականներին Թուրքիայում սկսված ազգայնական շարժումը թուրքական անուններ պարտադրեց մոլոկանների երեք հիմնական գյուղերին. դրանք անվանվեցին Յալինչաիր, Աքչիլար և Չալկավուր: Խորհրդային իշխանություններն, իրենց հերթին, Թուրքիայում մնացած մոլոկանների մեծ մասին, շահագրգռելով հայրենիքում տներով ապահովելու ծրագրով, 1962թ. բնակեցրին Ստավրոպոլի շրջանում:

Պետք է նշել, որ ներկայումս մոլոկան հայերի կրոնական տրանսֆորմացիան դեռևս շարունակվում է: Լոս Անջելեսի Ազուսա փողոցում գտնվող հավաքատեղիի հայ պրիգուն-մոլոկանները փոխել են իրենց ինքնությունը՝ դառնալով հայ պենտեկոստալներ կամ հիսուսականներ: Չնայած իրենց պաշտամունքի մեջ նրանք պահպանում են մոլոկանությունից մնացած հիմնական ծիսապաշտամունքային տարրերը, այնուամենայնիվ, Մ. Ռուդոմյոտկինի աստվածաբանական գաղափարների շեշտադրումից անցում է կատարվել հիսուսականության վարդապետական սկզբունքներին:

Ի դեպ, վերջին տարիներին մոլոկանությունից հիսուսականության տրանսֆորմացված եկեղեցին իր անվան վրայից հեռացրել է «հայ» բառը, իրենց ձևակերպմամբ՝ առավել ընկերային և գրավիչ մթնոլորտ ստեղծելու համար: Սակայն այս տրանսֆորմացիայի իրական պատճառները, թերևս, այլ են, որոնց վերլուծությունն արդեն ուրիշ թեմա է:

Հովհաննես Հովհաննիսյան
«Հանրապետական», թիվ 8, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայության այլալեզու և այլադավան որոշ խմբերի մասին 5

Հայության այլալեզու և այլադավան որոշ խմբերը
Սիրիա-Լիբանանում 10

Հայ էթնոկրոնական տարրը Արևմտյան Հայաստանում 17

«Ծպտյալ» հայերի կրոնադարձությունը 24

«Ծպտյալ» հայերի հետ կապված նոր իրողություններ 30

Քայել Մարգարօղլուի հարցազրույցը 35

Արաբացած հայեր Թուրքիայում 40

Հայ մոլոկաններ 44